

Գ. Խ. Սահակյան

2. ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐԸ»

2. Պարոնյանը իր երկրի ժողովրդի հիմնականները հրատարակելով առանձին հատորով, «Ազգային ջոջեր» վերնագրով, գրան կցել է մի առաջաբան, որտեղ գրում է.

«Մենք այս հրատարակության մեջ աշխատած ենք մեր ազգին մեջ գտնված երևելի անձերուն կենսագրություններն ընկնող՝ անոնց թերություններն ցույց տալ այն անաչառությամբ, որ կենսագրել մեր կր պահանջվի, առանց սակայն գուրս կենելու հեղինակության սահմաններ: Կր համարձակենք ըսելու, որ ոչ դոք վերավորելու ուզած ենք և ներկայացուցած ենք անձերն այնպես, ինչպես որ են և ոչ թե ինչպես որ կուզեն իրենք. և եթե ընթերցողն տեղ տեղ ծանր կետերու հանդիպի, անոնց պատասխանատուն մենք չենք. ո՞ր հայելին գահածն Արիլես կանդաղարձեն, ո՞ր լեռն սուրբը սատանա կր կրկեն»¹:

Հավատարիմ իր քաղաքական համոզմունքներին, ներկայակեր դրած ծնկներին՝ սկսում է գծագրել իր ջոջերին, սկսելով հորեն Գալֆայանից:

Այդ հոգևորականի մասին Պարոնյանը գրել է բազմաթիվ առիթներով, տարբեր տարիներին, տարբեր իրադրության պայմաններում, բայց զարմանալի հետևողականությամբ հավատարիմ է մնացել իր գնահատումների մեջ: Գալֆայանը հասարակական կյանքում նկատելի դեր կատարած գործիչ էր: Մնվել է Կ. Պոլսում, կրթությունն ստացել Վենետիկում, դարձել կաթոլիկ, բայց հետագայում հրաժարվելով իր դավանանքից, վերադարձել է մայր եկեղեցու գիրկը, որպես քարոզիչ կամ ուսուցիչ պաշտոնավարել Կ. Պոլսում, Թուրքիայում: 1850-ական թվականների վերջերից գրադվել է գրականությամբ. գրել է դրամատիկական ստեղծագործություններ («Ալաֆրանկաս», «Արշակ Բ»), բանաստեղծություններ, պոեմներ, լամարթինից կատարել է թարգմանություններ, իր անվան շուրջ ստեղծելով մեծ աշխուժություն: Գործուն մասնակցություն է ունեցել հայկական հարցին: Ներսիս Վարժապետյանի առաջարկով, հրիմյանի հետ, մեկնել է Եվրոպա՝ Բեռլինի կոնգրեսին ադերսագիր ներկայացնելու: Լիբերալ մամուլի համար եղել է բացարձակ հեղինակություն: Գովվել է, խնկարկվել բոլորի կողմից: Որպես բարձրաստիճան հոգևորական, սերտ կապերի մեջ է եղել մեծահարուստների հետ: Մոռանալով կրոնական կոչումը, վարել է աշխարհիկ կյանք, վերնախավի հովանավորությունը՝ վաճառելով զարմարձիկ է ժողովրդի տրամադրություններն արտահայտող առաջավոր մտածողներից եկող ղեկավարությունը: Համբավը ստեղծել է նոր համբավ, դարձրել նրան օրվա խոշորագույն դիմքերից մեկը:

Ահա այս մարդն է, որ ընկել է Պարոնյանի մտրակի տակ, ծեծվել է անխնա, պսակազերծ արվել կեղծ դափնիներից, փոքրացել, ներկայացել յուրահատուկ մի Տարտյուֆ:

1 2. Պարոնյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 7:

Ո՞րն է Գալֆայանին նվիրված դիմանկարում հիմնական միտքը: Երգիծական այդ կենսագրությունն ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ Պարոնյանը նրան չի մոտենում որպես կրոնական գաղափարախոսության կրողի, քննադատում է նրա երկերեսանությունը, այն որ նա կրելով հանդերձ հոգևորականի սքեմ, դրա տակ թաքցրել է աշխարհիկ հակումները, բարոյական մեղանշումները:

Հոգևորականությունը շատ է քննադատվել հայ նոր գրականության մեջ, սկսած Աբովյանից մինչև մեր օրերը: Բայց նկատելի է մի բան, այլ տեսանկյունից են քննադատվել քահանաները, այլ տեսանկյունից՝ ամուրի հոգևորականները: Առաջինները ծաղրվել են իրենց տգիտության, կրոնական դոգմաների գերի մնալով՝ ժողովրդի ազատագրական պայքարին հասցրած վնասի համար, ամուրի հոգևորականությունը, քննադատվել է և՛ այդ մեղքի համար, և՛ իր անբարոյական արարքների: Նման հոգևորականներից շատերի անվան հետ կապված են գայթակղալից պատմություններ: Շատ վանահայրեր, առաջնորդներ, չկարողանալով իրենց մեջ խեղդել բնության ձայնը, մեղանշել են կրոնական կոչման դեմ և մուտք գործելով համեստ ընտանիքներ, քայքայել են դրանք, դարձել ծաղր ու ծանակի առարկա: Պոլսի պատրիարքարանը կամ հայ կաթողիկ եկեղեցու պետերը աշխատել են վերջ տալ անախորժ պատմություններին՝ անբարոյական հոգևորականներին մի տեղից տեղափոխելով մի այլ վայր: Պարոնյանի մոտ նույնպես նկատելի է թունուտ թշնամանքը ամուրի հոգևորականության նկատմամբ, թերահավատություն թե առողջ, կայտառ մի երիտասարդ վարդապետ, որ վայելում է հարուստների սեղանների բարիքները, կայող է հեռու մնալ կանանցից, սիրարկածներից: «Թատրոնում» տպագրած իր առաջնորդողներից մեկում, որի վերնադիրն է «Ժառանգավորաց վարժարան», նա ուշագրավ դիտողություններ ունի: Խոսելով ինչ-որ հարուստի փողով հիմնվելիք հոգևորական դպրոցի մասին, այն համարում է վնասակար մարդիկ արտադրող մի գործարան: Անսքող պարզությամբ ու համարձակությամբ գրում է.

«Տասնև չորս տարեկան տղա մը, — վարդապետություն սորվիլ կսկսի, տասնևութին, քսանին սերը կսկսի երգել, քսանը հինգին վարդապետութենե կը վախնա և երեսունին Հայր սուրբ ըլլալու տեղ՝ հայր գավակաց կըլլա»:

Պարոնյանը մատր դնում է բուն վերքի վրա: Ակնարկը, հասկանալի է, ապօրինի զավակներ ունենալու մասին է: Շարունակելով իր միտքը, նույն հոգովածում խստորեն քննադատում է հայ եկեղեցու դոգմաները, բացարձակապես մերժելով ամուրիության և բարոյականության ներդաշնակության գաղափարը: Նա ասում է, թե աստվածաբանական, կրոնական գիտելիքներ սովորելով՝ երիտասարդը չի կարող կտրվել աշխարհիկ կյանքից, դրանք չեն կարող ստիպել աչքին, որ շտեմնի, ականջին, որ չլսի, սրտին, որ չսիրի: «Եվ քանի որ այս այսպես է, պիտի ստիպվինք այս վարժարանին մեջ աշակերտելիք տղաները նախ ներքինի ընել և վերջը ընդունել»²:

Խորեն Գալֆայանին նվիրված դիմանկարը հասկանալու բանալին հենց այդ է: Նա ամենևին չի քննադատում Գալֆայանի կրոնական հայացքները, նրա մոտ չի տեսնում ոչ քրիստոնեական միստիցիզմ, ոչ ավետարանի քա-

2 «Թատրոն», 1875, թիվ 150:

րոպ, այլ նրա դեմքին տեսնում է դիմակ, ուզում է պոկել, դեն գցել այն և ցույց տալ, թե որքան տարբեր է իսկական դեմքը դիմակից: Դիմանկարի սկզբում՝ պատմելով Գալֆայանի մանկությունը, ասում է:

«Նախագագամամը գուշակեց կարծես, — թե ձեռք պիտի քաշեր օր մը այս աշխարհիս վաղանցուկ հաճույքներին, թե յուր կյանքն աստուծո ծառայության նվիրելով մեծ քաղցրություն պիտի զգար: Ուստի օր մը աչերն վեր առնելով կնկան մը երես չէր նայիր... Բազմության մեջ փութանք ավելցնել թե մեկն մը տեսնվելու կասկած կամ երկյուղ չունեցած ատենն ալ չէր նայեր կիներու... Եթե ծեր ըլլային. և, հետևապես կուսակրոն ըլլալու համար ամեն տրամադրություն ուներ»³:

Հեշտությամբ կարելի է նկատել, որ Պարոնյանը վերոհիշյալ հատկանիշները չի համարում միայն Գալֆայանին հատուկ, այլ «Կուսակրոն ըլլալու համար» անհրաժեշտ հանգամանքներ, ընդհանրացնելով առհասարակ բոլոր ամուրի հոգևորականության համար: Այստեղ միմյանց դեմ մենամարտի ձեռնոց են նետում եկեղեցին ու բնության ձայնը: Ամուրի հոգևորականն է, կարծեք, ասում կրոնին, դու արգելում ես ինձ ամուսնանալ օրինավոր կերպով, ես էլ ապօրինի կապ կհաստատեմ կյանքի հետ, մարդկանց ներկայությամբ չեմ մոտենա կանանց, կմոտենամ գաղտնի:

Կրոնական կոչման և աշխարհիկ զգացմունքի այս ճակատային բախումը խլում է վարդապետից հրկյուղած հավատքը եկեղեցու օրենքների նկատմամբ, նա ոչ թե հոգևորական է ըստ կոչման, այլ խաղում է այդ կոչումը, ամեն ինչ հարմարեցնելով իր շահերին, նրա մոտ արդեն ամեն ինչ կեղծ է, սուտ, բայց միշտ ճշմարտի շպարով պատած:

Ահա և խորեն Գալֆայանի դավանած սկզբունքները, ըստ Պարոնյանի.

«Սիրե հայրդ ու մայրդ... Եթե հարուստ են.

Սիրե թշնամիներդ... Երեսանց.

Սուտ մի խոսիր... Եթե շահ չունիս.

Թող մի տար կիրքերդ գերի ըլլան անձիդ.

Դրացիներդ անձիդ պես սիրե»⁴:

Վերոհիշյալ հինգ կետերից երեքի մեջ ընդհանրացված են Գալֆայանի բարոյական սկզբունքները, իսկ վերջին երկու տողում դարձյալ կա ակնարկ նրա աշխարհիկ կյանքի, կրքերին անձնատուր լինելու, հարևան ընտանիքների կանանց հետ մեղապարտ կապեր պահպանելու վերաբերյալ: Իր բարոյական նկարագիրը այդքան խաթարած մի անձնավորություն, հասկանալի է, չէր կարող մոտենալ ժողովրդին, նա կարող էր իրեն լավ զգալ նույնպիսի խաթարված կենցաղով ապրող վերնախավի շրջանում, իր ամբողջ կարողությունը ի սպաս դնել ոսկու քսակի խնկարկմանը:

Գալֆայանին նվիրված գիմանկարի ամենաուշագրավ մասը այն հատվածն է, որտեղ հրգիծարանը բացահայտում է այդ հոգևորականի դասակարգային դիրքորոշումը, նրա քծնանքը հարուստ դասի նկատմամբ, պաշտոնի շարաշահումը: Հակառակ Ավետարանի այն պատգամներին, թե հարուստների և աղքատների նկատմամբ հավասար վերաբերմունք պետք է ունենալ, նա իր

³ «Երկերի ժողովածու», հատ. 2, էջ 9:

⁴ Նույն տեղում, էջ 17:

պերճախոսությունը շոայլում է հարուստներին շողորորթելու, նրանցից փող վաստակելու համար:

«Ազգային հիմանդանոցի մոմերուն պես կարգերու կը բաժնվեին յուր դամբանականները, մեկ ոսկի տվող մեռյալն բարեսիրտ կրլլար, երկու ղրկողը բարեսիրտ և քիչ մ'ալ ազգասեր կը հուշակվեր, երեք նվիրողը ազնիվ սրտով և վսեմ զգացումներով կը զարդարվեր. չորս համրողը հանրածանոթ ազգասեր կը ծանուցվեր. հինգ տվողն կենդանությանը ժամանակ այնքան զաղտնի ողորմություն տված կրլլար աղքատներուն, որ մարդ տեսած չէր լլլար, հայրենյաց բարերար կը հորջորջվեր և ասանկներուն զազաղը ութը հոգի կը կրեր, որովհետև չորս հոգի բավական չէին կրել այնչափ զովեստներով ծանրաբեռնյալ ննջեցյալը: Դազաղն ալ նրբեմն զգացման տեր և ազգասեր կրլլար, եթե զայն շինող ատաղձագործը գերապատիվին մեծիտիև մը ղրկեր: Իսկ անոնք, որ ժամանակ չունեին վրկանք վճարել դամբանախոսին, դամբանական լսելու իրավունքե կը զրկվեին, իրենց վերապահելով սակայն մեռնելու իրավունքը»⁵:

Աստիճանաբար թափանցելով Գալֆայանի էության խորքը, Պարոնյանը բացահայտում է նորանոր հատկանիշներ, որոնք ամբողջացնում են մարդը՝ որպես բնավորություն, նկարագիր: Դիմանկարում խստորեն ծաղրվում է այդ վարդապետի փառասիրությունը, պճնամոլությունը, ազնվականի հովերով ապրելու մոլուցքը, այն, որ նա սիրում է զուգվել, զարդարվել, իշխանավայել կենցաղով ապրել, ապացուցել, որ ինքը սերել է Կիլիկյան թագավորական տոհմից, Լուսինյան գերդաստանից:

«Տեղեկանալու համար այն վավերական աղբյուրներուն, որովք անժրխտելի կերպով հաստատված է այսօր, թե խորեն նար Պեյ Լուսինյանն սերած է, պետք է ներկա գտնվիլ այն գեղեցիկ, արքայական երազին, որ պատիվ ունեցած է տեսնել խորեն եպիսկոպոս 1870-ին»...⁶:

Գալֆայանի այս ցանկությունը, սովորական մի քմահաճույք չէր, թեկուզ իշխան երեալու փառասիրական տենչ: Բանն այն է, որ հայ բուրժուազիան, օրակարգի հարց համարելով Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ազատագրությունը, հրապարակ էր հանում կեղծ իշխաններ, որոնք հույսեր ունեին ապագա Հայաստանում ստանալու իբր թե իրենց նախնիների կորցրած կալվածները: Մի Լեոն Լուսինյան էր ասպարեզ եկել հիսունական թվականներին, հետագայում հանդես եկան կեղծ իշխաններ Ոստանիկ Տեր-Մարգարյանը, Հարություն Զաքրյանը, որոնց բոլորի հետ կապված են ծիծաղելի պատմություններ⁷:

Իրգիծաբանը Գալֆայանի գրական վաստակը դնահատում է գրեթե այն գիրքերից, ինչ գիրքերից գնահատել էր Միքայել Նալբանդյանը իր «Աղցմիք» պարոդիայում: Նալբանդյանը սուր քննադատության ենթարկելով «Վարդենիք» ժողովածուն, սրամիտ ոճով ցույց տվեց նրա ձևի ու բովանդակության

⁵ Նույն տեղում, էջ 18:

⁶ Նույն տեղում, էջ 14:

⁷ Լեոն Լուսինյանի մասին տե՛ս Միք. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 491—510, Աշ. Հովհաննիսյանի կոմենտարները:

⁸ Ոստանիկ Տեր-Մարգարյանի արկածները գրի է առել նրա քարտուղար Ն. Շիրվանյանը և հրատարակել Կ. Պոլսում, 1874 թ. «Վիշտք իմ ի Փարիզ, յերեսաց Ոստանիկի Տ. Մարգարյանց» վերնագրով:

լանհամապատասխանությունը, թե ինչպես հեղինակը ազգակցական, քրոջ նկատմամբ հղբայրական քնքուշ սեր երգելու շղարշի տակ արտահայտում է խորապես աշխարհիկ ու էրոդիական զգացումներ: Այստեղ էլ նկատվել է սիրային զգացմունքի բուռն պոռթկումը կրոնական կաշկանգումների դեմ⁹:

«Ջոկերում» ամբողջովին ժխտվում է Գալֆայանի ունակցիոն ուման-տիղմի ոգով, խրթին գրաբարով գրված պոեզիան, որի համար բնորոշ է կեղծ հուզականությունը, հանդամությունն ու բառամոլությունը, Ո՛, ա՛հ ձայնարկություններով տողերը լցնելը: Պարոնյանը արվեստ չի համարում այդպիսի գրականությունը, ոչ էլ գրող՝ նրա հեղինակին, ասում է, թե նրան բանաստեղծ են համարել «ազգային համբավ սափրիչները»: Սուր կերպով ծաղրելով Գալֆայանի չափածոն, գրում է. «Յուր վկայությունը նայելով հրկու ամիս աշխատելեն հտքը հետևյալ գյուտն ըրավ.

Զուր անուան կոչ
Գիտես, ո՛հ, ո՛չ:

Թեպետև պատմաբաններեն ոմանք Հոմերոսի կրնծայեն այս երեկի գյուտն... սակայն մենք պնդելով կը պնդենք, որ այս գյուտին փառքը հորենին միայն կը պատկանի»:

Պարոնյանը շատ էլ չի խտացնում գույները: Գալֆայանի «Վարդենիքի» պատահական էջում կարող եք գտնել դրա նման տողեր. ահա մեկը.

«Արշալույսն ո՛հ, ոչ երկար,
տևե վառ,
Եւ ոչ քան զօր մի գեղազարդ
փրթթի վարդ»¹⁰:

Գալֆայանի գրական վաստակին տրվում է ժխտական գնահատական հետևյալ շատ բնորոշ տողերով. «Յուր աշխատասիրություններուն մեկ մասը 1870-ին Բերայի հրդեհին հրո ճարակ եղան, ինչպես որ կըլլան, դժբախտաբար այն ամեն երկասիրություններն, որք տպված չեն... գրված չին: Այդ պործերու մոխիր դառնալն մեծ կորուստ մ'է անշուշտ ազգին համար, բայց կրնանք մխիթարվիլ յուր հրատարակած գործերով, որք քիչ բացառությամբ արժանիք ունենին... մոխիր դառնալուն»:

Ըստ երևույթին «քիչ բացառությամբ» արտահայտության տակ հասկանում է «Ալաֆրանկա» և «Արշակ Բ» պիեսները, որոնք բեմադրվում էին 1860—1870-ական թվականներին:

Այլ բնույթի ու կարողության տեր գործիչ է Մկրտիչ Տիգրանյանը: Սա սովորական մի շաուատան է, խաչագող, վեղարի տակ իր աշխարհիկ մարդու, այն էլ խաբեբայի, որկրամուլի էությունը թաքցնել շկարողացող մի պատուհաս հայ գյուղացու գլխին: Կա տարբերություն Գալֆայանի ու սրա միջև: Գալֆայանը զարգացած անձնավորություն է, հետևաբար նրա ազդեցությունը մեծ է, բայց Տիգրանյանն էլ, թեև թույլ մտքի տեր, գործել է բուն ժողովրդի մեջ, հետևաբար նույնքան վտանգավոր է: Նա որտեղ եղել է՝ զբաղվել է թալանով, յուրացումով, վայելել է զեխ ու խայտառակ կյանք: Ժողովուրդը

9 Խ. Գալֆայանի մահից հետո նրա թղթերում հայտնաբերվեցին սիրային մի շարք բանաստեղծություններ, որոնք նա գրել էր իր սրտի թելադրանքով. բայց չէր համարձակվել տպագրել: Դրանք հետագայում հրատարակեց Խ. Զուլանյանը «Անահիտ» հանդեսում:

10 «Վարդենիք», տաղերգեաց հորեն Վ. Գալֆայան, Ի Թէոդոսիա, 1863, էջ 159:

համախոսականներ է գրել նրա մասին, մերժել, վնդել, անդամ ծեծել, բայց Պատրիարքարանը փոխանակ պատժելու այդ շարագործին, մի տեղից վերցրել՝ մի այլ վայր է ուղարկել, հաճախ ավելի նպաստավոր, քան նախորդը, առիթ տալով, որ Հայաստանի բոլոր գավառների մարդիկ ճանաչեն Քրիստոսի անունով իրենց դիմող ճշմարիտ պատուհասին: Մամուլը մեծ աղմուկ է բարձրացրել նրա շուրջ, գայրալից հոգվածներ գրել:

Ինչպես Գալֆայանի ղեպքում, այստեղ էլ գրողը մատր զնում է ճիշտ վերքի վրա, բացահայտում «ջոջի» բարոյական կերպարը: «Բավական ժամանակ հրաշագործություններ ասպրեկեն ետքը՝ 1861-ին Բալուի առաջնորդությունը կստանձնե... և զարմանալի զուգահիստություններ մեր փոքրավորին կինն ալ նույն օրը Պոլիսեն կը մեկնի՝ Բալու երթալու համար...»¹¹:

Երգիծաբանը պրանցել է նաև այս վարդապետի մասին տարածված այն մեղադրանքը, թե նա որպես փոքրավոր պահել է սիրուհի՝ նրան հագցնելով տղամարդու շոր. «Շատերը պոռագին այն ատեն թե այդ փոքրավորն իգական սեռն էր, բայց ինքը հերքեց այդ զրպարտությունն փաստելով, թե հագուստը հող մ'է, բանթալոնը արական գոյականներու վրա կը դրվի, իսկ շրջագեղատը՝ իգականներու վրա. ուստի քանի որ յուր փոքրավորն բանթալոն կը հագնի, քերականության կանոնին համեմատ արական է և ոչ իգական, սակայն խմբագիրները, որ քերականությունը շատ չեն հարգեր, այս բացատրությունը գոհացուցիչ չգտան»:

Եթե Գալֆայանն ապրում էր հարուստ դասի շրջանում, նրա հաշվին, ապա Տիգրանյանի եկամտի աղբյուրը աշխատավոր, միամիտ ժողովրդի շահագործումն էր: Հետամենաց գավառներում նա խաբել է մարդկանց իրեն ներկայացնելով որպես հրաշագործ, այսահարներ, հոգեկան հիվանդներ բուժող: Դպրոցներ բաց անելու համար հանգանակություններ է կատարել գյուղացիներից և յուրացրել է հավաքված գումարները. «Լավ չենք հիշեր,—գրում է երգիծաբանը,—Սղերդի մեջ, թե երագին մեջ ալ վարժարան մը կը բանա»:

Տիգրանյանը իր արկածալից, թափառական կյանքի վերջում հաստատվում է Պոլսում, պրում մի գիրք «Հայկի գործոց Տիգրանյան Մկրտիչ վարդապետի» վերնագրով, «Հայկի մը,—կարդում ենք «Ջոջերում»,—որ դրժ-բախտաբար շատ լավ կը ցուցնե անոր պատկերը»¹²:

Պարոնյանը ծաղրում է նաև Վահան Վարդապետ Պարտիզակցուն, որը մեր բանասիրության մեջ հայտնի է որպես Վահան Տեր-Մինասյան, բայց ծաղրում է գերազանցապես նրա բնավորության որոշ գծերը: Նրա մոտ էլ տեսնում է սքեմի ղեմ մեղանշում, աշխարհիկ հակումներ, դինեմոլություն, զվարճասիրություն, բայց զիջող է, ներողամիտ: Պատճառը պարզ է. նրա հասարակական գործունեությունը չի մերժում, իսկ գրականը բարձր է գնահատում: Այս հոգևորականը ասպարեզ է մտել ուս-թուրքական պատերազմի

¹¹ Նույն տեղում, էջ 70:

¹² Այժմ հազվագյուտ այդ գրքից մի օրինակ պահպանվում է գրականության և արվեստի թանգարանի գրքային ֆոնդում: Պարոնյանը հիմնականում օգտվել է վերահիշյալ «Հայկից», որտեղ, ի դեպ, հետաքրքիր շատ փաստեր ենք գտնում ժամանակի զավառական կյանքի, հայ է քուրդ ժողովուրդների փոխհարաբերության, Պոլսի պատրիարքարանի և գավառի փոխհարաբերության և այլ հարցերի մասին: Այն պարունակում է նաև տեղագրական, վիճակագրական հետաքրքիր փաստեր, որոնք կարող են օգտակար լինել մոտավոր անցյալի հայ պատմությունն ուսումնասիրողներին:

տարիներին, որպես հոգևոր հովիվ ուղարկվում է դավաճանները ո՛չ այնքան էկեղեցական պաշտոնով, որքան ժողովրդին քաղաքական ազատության պատրաստելու: Հիշատակության արժանի է հատկապես ղեպի Կարին, ուսական սահմանները կատարած առաքելությունը այն օրերին, երբ ուսական ղորքերը սկսել էին հեռանալ Կարինի դաշտից, և հայ զաղթականների մի հոսանք հետևում էր նրանց: Վահան վարդապետը առաջադրանք ուներ համոզելու, որ հայերը չզաղթեն, չդատարկեն հայաբնակ գավառները, և զրանով էլ չվերանա արևելյան նահանգներում հայ բնակչության թվի գերակշռության փաստարկը:

Յուրօրինակ աշխուժությամբ է կատարում Վահան վարդապետը իրեն վստահված պաշտոնը: Գրեթե մոռացած իր կրոնական կոչումը, հանդես է գալիս որպես քաղաքական քարոզիչ, միաժամանակ մոտիկից ծանոթանում ժողովրդին, ցուցաբերում հետաքրքրություն ղեպի նրա հոգևոր մշակույթը, հավաքում է անգիր բանահյուսության դոհարները և, վերադառնալով Կ. Պոլիս՝ դրանց մի մասը լույս է բծայում «Հայկական հիսնյակ առակք» ժողովածուն: Վերահաս քաղաքական խստությունները հնարավորություն չեն տալիս հրատարակել մյուս նյութերը: Դրանք կարողանում է տպագրել հետագայում, «Անգիր դպրություն» արժեքավոր աշխատության Ա և Բ հատորներով¹³:

Պարոնյանը կատակախառն ոճով նկարագրում է այս վարդապետի ճանապարհորդությունը:

«Անմիջապես ճամբա կելնե այս այցելուն հրացանն ուսեն կախված: Ճամբան երբեմն որսորդություն բնելով, երբեմն երգելով, երբեմն խմելով Դերջան կը հասնի, ուր Սրբրխյւր սուրբ Թորոս եկեղեցին կիջնե: Հետևյալ օրը ծառի մը վրա կելնե և կը հորդորե ժողովուրդը, որ չզաղթե: Կարին կը մտնե ճիշտ այն օրը ուր իրմե ժամ մը առաջ մտած էր Հայկական խնդրույն անհաջողության լուրը: Կուզե հոն եկեղեցւոյն մեջ կարդալ այն կոնդակը, որ Պատրիարքարանն տրված էր իրեն և որ նպատակ ուներ ժողովուրդը համոզել չզաղթելու համար: Հարություն եպիսկոպոս կրնդդիմանա. այցելուն ձայն չհաներ, հրացանը և օղիի շիշն առնելուն պես ճամբա կելնե ղեպի Կարին: Հոն կը ներկայանա Լազարեֆին, որ կը ղրկե զինք Տեր-Ղուկասոֆին, որ Տփղիսի ճամբան ցույց կուտա իրեն»...: Ապա «Բյուրական կերթիս, կարթնցրնե կաթողիկոսը որ— ո՛վ է ան, հարցնելեն ետքը ձախ կողմը կը դառնա, նորեն կը քնանա»:

Ամբողջ դիմանկարը զրված է արտակարգ զվարթ տրամադրությամբ, կատակախառն ոճով, սրամիտ կամիթներով: Հեղինակը այս վարդապետի մոտ ոչ բարոյական արատներ է ցույց տալիս, ոչ էլ ծաղրում է նրա զործունեությունը: Կարծեք հիմք չունենալով խայթել ենթակային, խայթում, քննադատում է այլ մարդկանց, ծաղրում տարբեր երևույթներ: Քննադատում է կաթողիկոսի դատապարտելի անհոգությունը հայկական հարցի այդ շիկացած օրերին, գավառի հոգևոր իշխանությունների կամայականությունները, Պոլսի պատրիարքին:

Նրգիծաբանը «Ազգային ջոշերում» տեղ է տվել երկու հոգևորականների, որոնց մոտենում է միանգամայն այլ տեսանկյունից: Նրանք ոչ թե կրո-

¹³ Վահան վարդապետ Տեր-Մինասյան, Անգիր դպրությունը և առակք, Կ. Պոլիս, 1893, Բ հատոր, Կ. Պոլիս, 1904:

նական ըմբռնումների, բարոյականության դեմ են մեղանշում, այլ ներկայացված են որպես իրենց ժողովրդի դեմ գործող ազգի դավաճաններ՝ ամենածանր հանցանքը մարդու համար: Ըստ էության նրանք քաղաքական գործիչներ են, Վատիկանի գործակալները, որոնք իրենց բուն դիմքը ծածկած Ավետարանի քարոզներով, հայ իրականությունում կատարում էին քայքայիչ աշխատանք: 'Իրանք են Անտոն Հասունյանը և Սուքիաս Քաղանճյանը: Առաջինը հայտնի հասունյան շարժման պարագլուխն էր, որ հայ իրականություն էր եկել քաղաքական որոշակի առաջադրանքով՝ հայ ժողովրդի կաթոլիկ հատվածի մեջ պատվաստել այն մտայնությունը, թե անհնար է հավատաթիմ մնալ մայրենի լեզվին, ազգային մշակույթին, միաժամանակ լինել արժանի Քրիստոսի սիրուն:

Հակառակ Պարտիզակցու գիմանկարի զվարթ ոգուն, Հասունյանի մասին գրվածը ծայր աստիճան լուրջ է: Կարծեք հեղինակի մտքի վրա իջել է թանձր մի թուխպ, դժբախտ մի դեպք թունավորել է նրա էությունը: Այստեղ էլ, անշուշտ կան, սրամիտ համեմատություններ, բնութագրումներ, բայց չկա կատակ, ծիծաղ: Հեղինակը գրում է ազգը օտարին վաճառող մի դավաճանի մասին:

Ա. Հասունյանին դասելով նրանց շարքը, որոնք «Նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքներն ս. Պապին հողաթափներուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռքերուն մեջ», Պարոնյանը վեճի է բռնվում այն մարդկանց հետ, որոնք նրան համարում են «ազգատյաց»: Նա այս գնահատումը համարում է տգիտության արդյունք: Ազգատյաց լինելու համար, ասում է, պետք է պատկանել նույն ազգին, մինչդեռ «յուր գործերն բավական են ապացուցանել, թե հայու զավակ չէ, եթե ըլլար, անկարելի էր որ իր ազգն սպանելու աշխատեր»:

Ուշագրավ է Պարոնյանի մի դիպուկ արտահայտությունը Հասունի հանցանքի ծանրությունը ցույց տվող: Նա հիշատակում է հետևյալ փաստը. երբ հին հույները հարցրել են Սոգոնին, թե ինչու պատիժ չի սահմանել հայրասպանների համար, մեծ օրենսդիրը պատասխանել է. «Չէի կարծում, որ Աթենքում պիտի գտնվեն այնպիսի մարդիկ, որոնք սպանեն իրենց ծնողներին»:

«Ազգային ջոջերում» մեզ ներկայանում է մի այլ հոգևորական էլ՝ Սուքիաս Քաղանճյանը, որը, իհարկե, չունի Հասունյանի քաղաքական կշիռը, բայց ծառայել է նույն պրոպագանդային, եղել է հայ կաթոլիկների Անտոնյան միաբանության պետը:

Ի տարբերություն Անտոն Հասունյանի, որը արձակ-համարձակ գործում էր հօգուտ Վատիկանի, ժխտում հայ կաթոլիկների ազգային պատկանելությունը, լեզուն, պատմությունը, Քաղանճյանը քարոզներ է կարդացել հայ իրականությանը հուզող հարցերի շուրջ, նույնիսկ քննադատել է Հասունյանին: Այս բոլորը նա կատարել է խորամանկությամբ, ժողովրդի մեջ հեղինակություն ձեռք բերելու համար: «Սուքիաս Քաղանճյան ծնած է Միջագյուղ,—գրում է Երզիծաբանը,—սատանային երկու օր առաջ, թեպետև կարծողներ ալ կան թե շորս օր ետքը ծնած է»:

Ահա այս սատանայությունը, կեղծիքն է ուզում բաց անել «ջոջերի» հեղինակը, ցույց տալ, որ նրա ճամբան էլ, Հասունի նման, ձգվում է «Պոլիսեն Հոռվմ, Հոռվմեն Պոլիս»:

Հոռմում նա «կատարելապես ձեռք բերավ աստվածաբանությունը, զոր շատ գործածելու

առիթ չունեցավ», «ինքզինքը ժողովրդյան սիրելի ցույց տալու արհեստն աստ-վածաբանութիւնն շատ աղեկ ուսած ըլլալով՝ քիչ ատենի մեջ ժողովրդյան համակրությունը իրեն դրավեց»:

Այնուհետեւ, ծանոթացնում է Քաղանճյանի կրօնական և քաղաքական գործունեությանը, նրան ներկայացնում որպէս Հոռմի Պապի հակահայ հայտնի Ռեւրսուրուս կոնդակի ջատագով, հայ ժողովրդի կաթուղիկ հատվածին կեղծ ու պատիր խոսքերով խաբող, ազգի ջլատման համար ոգի ի բռն աշխատող մի մարդ, որը գործում է ոչ թէ համոզմունքով, այլ շահի ակնկալությամբ, փառասիրական տենչից մղված: Պարզվում է նաև Քաղանճյանի ու Հասունի հակառակության գաղտնիքը՝ ինչ-որ հնդկահայի թողած միլիոնների ժառանգության հետ կապված:

«Մենք խեղճերս երբեմն այնպէս կը հավատանք, որ,—գրում է երգիծաբանը,—այն կրօնավորներն, որ Հասունյանի հակառակ են ազգին իրավունքները պաշտպանելու ազգասիրութենէ առաջնորդված են, բայց երբ գործին քիչ մը խորը քննենք, կը տեսնենք, որ մեջեն կամ ազարակի խնդիր կենի կամ ժառանգության դատ և կամ այնպիսի խնդիր մը, որ ուղղակի իրենց քսակին հետ վերաբերություն ունի, և ազգին շահերուն հետ բնավ գործ չունի»¹⁴:

«Ազգային ջոջերում կան հոգևորականներ, որոնց նկատմամբ հեղինակը դրական մոտեցում ունի: Դրանք են Ներսէս Վարժապետյանը և Պողոս Պոյնունյէրի: Առաջին ականարկից կարող է տարօրինակ թվալ, թէ Պարոնյանի նման սկզբունքային մի մարդ, որն իր ստեղծագործական կյանքի ընթացքում անխնա պայքար է մղել հոգևորականների դեմ, ինչպէս ներողամիտ դիրք է բռնել որոշ եկեղեցականների նկատմամբ: Փորձենք բացատրել փաստը: Վարժապետյանը Ադրիանապոլսում եղել է երգիծաբանի ուսուցիչը: Պարոնյանը երկու դար հարգանքով է խոսում այդ մասին, գրելով «Մեծ փառք ու պատիւ է ինձի՝ Նորին Սրբազնության պէս դասատու մը ունեցած ըլլալս, սակայն չեմ կարծեր թէ Սրբազան Պատրիարքն ալ իրեն պարծանք համարի՝ ինձի պէս աշակերտ մը ունեցած ըլլալը...»:

Անշուշտ աշակերտական հարգանքը որոշ չափով բռնել է նրա ձեռքը, թույլ չի տվել ծաղրելու գեթ այն թերութիւնները, որոնք իր «Թատրոնում» խստորեն քննադատվել էին, բայց նրա նկատմամբ հարգալիք վերաբերմունքը հիմնականում բացատրվում է այն ժողովրդականությամբ, որ վայելում էր Վարժապետյանը ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և պատերազմից հետո: Պատերազմի տարիներին պատրիարք Ներսէս Վարժապետյանը՝ իրեն համարելով ապագա Հայաստանի հոգևոր պետը, կառավարության հետ խոսում էր այնպիսի համարձակությամբ, որ զարմանք էր պատճառում թուրք թերթերին. չորս հարյուր տարվա տիրապետողի և տիրապետվողի վիճակը փոխարինվում էր հավասար ուժերի փոխհարաբերությամբ: Թուրքական կառավարության հղած իր յաջողութիւնների (խնդրագրերի) մեջ արդեն ոչ թէ խնդրողի դերում էր հանդես գալիս, այլ պահանջողի: Զորութիւնը, իհարկէ ոչ թէ իր անձնական արժանիքների մեջ էր, այլ այն բանի, որ ռուսական բանակը եկել հասել էր Ադրիանապոլիս, և Սան Ստեֆանո ավանում բանակցութիւններ էին տեղի ունենում ռուսների և թուրքերի միջև: Հրապարակի վրա կային

14 Նույն տեղում, էջ 144:

ներկու կախարդական ուժեր. մեկը Ա. Հասունյանն էր, որ ջլատում էր ժողովրդին, մյուսը Վարժապետյանն էր, որը գործում էր հակառակ ծրագրով: Անտոն Հասունյանի համար բնութագրական էր դավաճանությունը, Վարժապետյանին հայ բուրժուազիան ներկայացնում էր որպես հինգերորդ դարի կաթողիկոս Ներսես Մեծի դերը կատարող մի գործիչ, որը նոր պայմաններում պայքարում էր ժողովրդի քաղաքական ազատության, նրա միասնության ամրապնդման համար: Իրականության դեմ չմեղանչելու համար պետք է ասել, որ դեմոկրատական հոսանքը՝ արհեստավորները, զավառի ժողովուրդին էլ Ներսես Վարժապետյանին բնորոշում էին որպես նշանավոր մի գործիչ, առաջնորդ:

4. Պոլսի նախորդ պատրիարքներից շատերի անվան հետ կապված էին տհաճ փաստեր, մեկը աչքի էր ընկել իր կրոնական մոլեռանդությամբ, մյուսը իր տգիտությամբ, շահամոլությամբ, անվայել արարքներով: Այդպես չէր Ներսեսը: Ուներ անբասիր հոգևորականի համբավ: Պարոնյանը չէր կարող չդիտել այս բոլորը, շարտահայտել ժողովրդի վերաբերմունքը, առանց հաշվի առնելու նրա կրոնական վեղարը, որի տակ երգիծաբանը տեսնում էր առաջին հերթին աշխարհիկ գործչին: Վարժապետյանին հակադրելով այն հոգևորականներին, որոնք հայ ժողովրդի գլխին փորձանք են եղել, նա գրում է.

«Շատ կրոնավորներ «հովիւ քաջ զնէ՛, զանցն իւր ի վերայ ոշխարաց իւրող»-ն սխալ հասկանալով՝ կելլեն իրենց ժողովրդյան վրա կր նստին և անոր անտանելի բեռ մը կրլլան: Վարժապետյան աշխատած է միշտ յուր արածած հոտին լուծը թեթեւեղելու»¹⁵:

Հակառակ դիմանկարի սկզբում տրված իր խոստմանը, թե միայն դրական բան ունի ասելու, նաև քննադատում է Վարժապետյանի որոշ արարքներն ու բնավորության գծերը: Խոշոր թերություն է համարում այն, որ նա օգտագործելով իր հեղինակավոր դիրքը, հաճախ հայերեն թերթերը փակել է տվել: «Իրեն թշնամի նկատելով՝ դադրել տվավ «Թատրոնը», որ հանդգնած էր նորին սրբազնության մեկ շրջաբերականը հարվածել. այսպես խափանել տվավ «Ասիան», որ կրոնավորի մը անբարոյականությունը կը ձաղկեր»:

Փոքր մեղադրանք չէ հիշատակվածը: Վարժապետյանի ինքնիշխան այդ արարքի ծանր տպավորությունը Պարոնյանը թուլացնում է փաստի մատուցման համար բնորոշ շոյող ոճով: Նույրը հումորով ասված այդ տողերից անմիջապես հետո, իր ուսուցչին չվշտացնելու համար ներողամտաբար հավաստիացնում է, թե այս բոլորով հանդերձ նա չի եղել ռիսկալի, հենց նույն թերթերը դադարեցնելուց հետո աշխատել է նրանց վերաբացման համար:

Գրեթե նույնպիսի մեղմ տողերով է նա գրել մի այլ հոգևորականի՝ Պողոս Պոյնունյի թահանայի մասին: Ահա և այդ դիմանկարի սկիզբը.

«Հեղինակու վարժված գրիչ մը երբ գովել ստիպվի՝ այն տպավորությունը կրնէ բնթերցողներուն վրա, ինչ տպավորություն որ կրնէ հանդիսականներուն վրա դերասան մը, որ Բուրսոնյաք ներկայացնելու սովորած ըլլալով՝ Մակբեթի դերը կատարելու կը հարկադրվի: Պոյնունյի կյանքը գրելու համար գովելու արհեստը գիտցող գրիչ մը պետք է:— Ութուճյանի գրիչն քանի մը վայրկենի համար փոխ առ, կրսեք ինձ, առանց խորհելու որ Ութուճյան վայրկան մը չի կարող բաժնվիլ իր գրիչեն»¹⁶:

¹⁵ Նույն տեղում, էջ 219:

¹⁶ Նույն տեղում, էջ 187:

Բայց ո՞վ է այս երջանիկ քահանան, որ Պարոնյանի կիզող մտրակի տակ ընկնելու, նրա հարվածները ստանալու փոխարեն՝ արժանացել է բացարձակ համակրանքի, անգամ ալիլի, բան վարժապետության: Պոչնուեյրիյանը հակառակ իր հոգևորական կոչումին, եղել է աշխարհիկ անձնավորություն, շատ մոտիկից կապված ժողովրդի հետ, նրա ցավերով, հոգսերով ապրող, նրան ծառայող մի շարքային քահանա, որն ունեցել է նաև զրական գործունեություն: «Սև հագուստներն, որ շատ անգամ կապական են մարդու սիրտն ու միտքը, բնավ ազդեցություն չըրին և չփոխեցին ասոր ոչ միտքն և ոչ սիրտը»:

Պոչնուեյրիյանը իր ժամանակին խանդավառվել է Միքայել Նալբանդյանի զաղափարներով, հատկապես նրա «Երկրագործությունը որպես ուղի դճանապարհ» աշխատությամբ: Իր «Առաջին քայլ բարվոքման ազգին հայոցի Հայաստան աշխարհի» գրքում (1878), ինչպես Պարոնյանն էլ է վկայում, «Կր հորդորեր ազգայիններն՝ երկրագործական վարժարաններ բանալ Հայաստանի մեջ»:

Ինչ խոսք, մի հոգևորական գործիչ որքան էլ առաջ գնար, չէր կարող հասկանալ Նալբանդյանի հեղափոխական դեմոկրատիզմը, բայց Նալբանդյանի գրքի սոցիալական կողմը խորապես ազդել է նրա վրա: Պարոնյանը ընդարձակ մեջբերում կատարելով Պոչնուեյրիյանի գրքից, վերցրել է հատկապես այն հատվածը, որը հարակցվում է Նալբանդյանի «Երկրագործության» հետ: «Եվ ինչ ավելի օգտակար գործ՝ քան թե երկրագործության զարգացմամբ հարմարով բուծել ազգին աղքատաց թշվառությունը»:

Պարզ է, թե ինչու Պարոնյանը նման մի գործիչ գետեղել է իր ջոշերի մեջ: Ցանկացել է նրա գործունեությունը հակադրել մորթապաշտ ու փառասեր հոգևորականների արարքներին: Դիմանկարի վերջում երգիծաբանն ունի ուշադրավ խոստովանություն այդ մասին, բացատրում է, թե ինչու Գալֆայանից, Տիգրանյան հայկակոպոսից և Հասունյանից հետո խոսում է նման հոգևորականի մասին: «Թերևս շատերը հետաքրքիր ըլլան հասկնալ թե ինչու Լուսինյանի, Հրաշագործի և Հասունյանի ետքը գրեցինք այս ծերունվուն կյանքը: Դիտմամբ հետ թողուցինք՝ ապացուցանելու համար, թե լույսը խավարեն ետքը կույա»¹⁷:

Մինչև այստեղ մենք տեսանք, որ Պարոնյանը գրելով մի քանի հոգևորականների երգիծական կենսագրությունը՝ քննության է առել նրանց հասարակական, քաղաքական գործունեությունը, գրեթե չի խոսել այդ մարդկանց կրոնական զաղափարախոսության մասին: Դա շատ բնական է. բոլորի մոտ էլ վեղարը եղել է արտաքին հատկանիշ, յուրահատուկ դիմակ: Բայց ահա անվեղար, անդիմակ մի գործիչ, որը հոգևորական չլինելով, մոտ հիսուն տարի քրիստոնեական մոլեռանդություն, անգամ դեռի ու շարքերի գոյությունն է քարոզել: Դա հայտնի Հովհ. Տերոյենցն է, այլ անգամը՝ Չամուրճյան պատվելին: Ի դեպ, եղել է ժամանակի ամենակարգացած, բազմաթիվ լեզուներ իմացող, սուր միտք, կուտ տրամաբանություն ունեցող մարդկանցից մեկը: Լավ ծանոթ է եղել ինչպես անտիկ փիլիսոփայական մտքին, այնպես էլ ֆրանսիական մատերիալիստների տառիչքագործություններին, անգամ գերմանական կլասիկ փիլիսոփայություններ: Ու այս բոլոր գիտելիքներով զինված՝ պաշտպանել է միջնադարյան խավարամոլությունը:

¹⁷ Նույն տեղում, էջ 195:

Ի տարբերություն Գալֆայանի, Տիգրանյանի, որոնց մոտ կա խոսքի ու զործի հակասություն, կեղծավորություն, Տերոյենցը անհամեմատ ավելի հավատքով է կապված իր դավանանքին, գործում է համոզված, շունի Գալֆայանի փառասիրությունը, ցուցամոլությունը, գիտի իր արժեքը, հետադիմական հայացքները ներկայացնել որպես քրիստոնեական վարդապետության աներեր պատգամներ: Պարոնյանը Տերոյենցի դիմանկարը գծելիս բերել է պատմական մի վավերագիր, վերցնելով ժամանակի մամուլից և ժողովների արձանագրություններից: Խոսքը վերաբերում է Տերոյենցի և իբերալ Ութուճյանի դատին, որը տեղի էր ունեցել Պատրիարքարանում: Տերոյենցը սիրում էր իր հակառակորդներին ներկայացնել նալբանդյանի համախոհներ, փորձել էր նաև իբերալ «Մասիս» թերթի խմբագրին նման պատվի արժանացնել, մի բան, որ շատ զայրացրել էր Ութուճյանին: Ահա Տերոյենցի և Ութուճյանի զրույցից մի քանի տող.

Տերոյենց.—Ամեն թերթի մեջ ինձի կանպատվե:

Ութուճյան.—Սուտ է, ես լնալ անպատված չեմ գինքր, ես ճշմարտությունը կը գրեմ, ինքն է, որ կանպատվե գիս՝ դոնամիջյան հերետիկոս անվանելով:

Սրբազան պատրիարք.—Ինչո՞ւ անանկ բաներ կը գրես, պատվելի:

Տերոյենց.—Որովհետև նալբանդյանն ալ դոնամիջյան է և այս նալբանդյանը համարձակեցավ օր մը դիվաց գոյությունը ուրանալ¹⁸:

Փաստը իզուր չի հիշատակվում: Պարոնյանը ցանկանում է պատմությանը հանձնել Տերոյենցի մոլեռանդ պայքարի ձևերից մեկը՝ հաբեկումը, նալբանդյանի գաղափարներին հարելը համարելով հերետիկոսություն, — իսկ այդ մասին նա գրել է տարբեր առիթներով: Այս մեջբերումից, միաժամանակ երևում է Երզնթաբանի համակրանքը նալբանդյանի նկատմամբ:

Տերոյենցը թողել է գրական խոշոր ժառանգություն. կրոնաբարոյական հարցերի մասին գրել է գրքեր, պատմական հետազոտություններ, ստեղծել զպրոցական ձևերակներ, կատարել թարգմանություններ, բոլորն էլ տոգորված նույն հետադեմ գաղափարախոսությամբ, քրիստոնեական ամենամոլեռանդ միստիցիզմով:

Գրական այս ամբողջ արտադրանքը երգիծաբանը համարում է վնասակար, ժխտում խստագույն հետևողականությամբ: Ակնարկելով տխրահռչակ «Երեւակում» Միքայել նալբանդյանի դեմ Տերոյենցի մղած պայքարին, գրում է. «Դեհու գոյությունը ուրացողները հերետիկոս կհռչակվեն. և ինքը ամեն ինչ կը թափեր դեհու գոյությունը հաստատել յուր գոյությամբը, և որ զարմանալի է՝ դատը միշտ կվաստկեր»:

Պարոնյանը ասում է, թե Տերոյենցը որպես մանկավարժ նույնպես վնասակար դեր է կատարել. նա աշակերտներից պատրաստել է կամագուրկ էականեր, առավոտից մինչև իրիկուն ալոթող սաներ, իսկ իր պատրաստած ուսումնական ձևերակներով զարկ է տվել սխոլաստիկ դաստիարակությանը:

Խոսելով նրա լույս բնծայած քերականական մի ձևերակի մասին, գրում է. «Այս քերականության վերջին երկու մասերը արժանի չեղան լույս տես-

¹⁸ Պարոնյանի ակնարկած վեճը տեղի է ունեցել 1864 թ. մարտի 16-ին, պատրիարքարանում, կրոնական ժողովի նիստերից մեկում: Այդ վեճի ավելի մանրամասն ողագրությունը տե՛ս Լ. Գ. Մրմրյան, Տասնիններորդ դար և Հոփհ. Պրոսպեկտ Տերոյենց, Կ. Պոլիս, 1908, էջ 203—220:

նկու, բայց առաջինը մեծ, խիստ մեծ ընդունելություն գտավ... նպարավաճառներեն, որոնք հիշյալ քերականությամբ սորվեցան, թե ինչպես պանիր կփաթթվի թուղթերու մեջ... վարժարանին հառաջադեմ աշակերտները սկսած էին այն քերականությամբ սխալ խոսելու և սխալ գրելու վարժվիլ»

Ահա և Տերոյենցի թարգմանությունների բնութագիրը.

«Բասգալա «Խորհրդածությունքն» երևելի տեղ մը բռնած է ասոր թարգմանություններուն մեջ յուր... սխալներովը: Այս դիրքն աշտարակաշինության ժամանակ թարգմանված ըլլալուն պատճառով է, որ Բասգալին ըսածը սխալ հասկցած է պատվելին, թեպետև ինքը կը պնդե, որ շատ հավատարիմ գտնված է թարգմանության մեջ, և եթե տեղ տեղ սխալ թարգմանած է, պատճառն այն է, որ բնագիրն ալ սխալ գրված է: «Խորհուրդ գաղտնի ընկերությունք», որ դարձյալ անդրլեռնականություն (այսինքն կաթուղիական մոլեռանդություն—Բ. Ստ.) կը հոտի և գլխու ցավ կը պատճառե»:

Ինչպես Գալֆայանի դեպքում՝ այստեղ էլ Պարոնյանը շատ հստակ որոշում է իր ջոջի տեղը հասարակական կյանքում, բնութագրում նրա դասակարգային պատկանելությունը, ընդգծելով, որ անվեղար այդ կրոնամուր ոչինչ չունի ժողովրդի հետ, գտնվում է ամիրայական դասի պաշտպանության տակ և այդ դիրքերից է լուծում բոլոր խնդիրները: Միջավայրը, նրան հետաքրքրող հասարակական խավը ամիրայությունն է: Հարուստ այդ դասակարգից է վարձատրվում առատորեն, ի տրիտուր այն ծառայության, որ մատուցում է նրան, իր պարրերաթերթը տրամադրելով ամիրաների փառաբանությանը: Հարուստների նկատմամբ երախտագիտական անսահման զգացումով լցված գործիչը «Յուր աղոթքին մեջ թեպետև երկնից արքայությունը կը խնդրե, ոսկայն հարուստ ամիրաներ ալ խնդրելու չէր մոռնար... ըսելով. Արքայություն խնդրենք, բայց հացագործը դրամ կուղե, ամիրաներ տուր ինծի, աստված և ամեն բան ունեցած կըլլամ»:

Տերոյենցի խավարամոլությունը, առաջադեմ հոսանքների դեմ մղած պայքարում մինչև լրտեսության ու մատնության դիմելու նրա նենգությունը, «Մեղու» դեմոկրատական թերթի նկատմամբ բռնած դիրքը, ամբողջ աշխարհահայացքը երգիծաբանը հիանալի կերպով բնութագրել է գիմանկարի վերջում հետևյալ տողերով.

«Չամուրճյան կը նկարագրվի գետինը պառկած կռակի վրա և գիրք մը բռնած: Շակատին վրա մեծ տառերով վիճադրված է կրոն: Դեկորու խումբ մը շրջապատած են զինք և ղինյալ ևն զենքերով, որոց վրա գրադատություն դրոշմված է: Քթին վրա միշտ կը բզզա մեղու մը և երբեմն կը խայթի: Մասիս, Արեւելյան մամուլ անոր վերարկուն կը քաշեն: Քարաքաշյան կը ներկայացնեն իրեն տղու խաղալիկ մը, որուն վրա գրված է կրոնական դրոշմ: Քովը գետնի վրա փռված է աքաղաղ մը, որ իրեն համար զոհված է երեք անգամեն ավելի խուսած չըլլալուն համար: Քանի մը հողեմեն Պատվելին զլխուն վերը կայնած փրցունել կաշխատին այն պսակը, զոր նվիրած էր իրեն երբեմն պատրիարքարանի հավատաքննության սուրբ ատյանը: Եվ Պատվելին իրեն շուրջը գտնվողներուն այս հեղությունները տեսնելով կը դառնա անոնց կը նայի այնպիսի դեմքով մը, զոր մենք կունենանք հրե տասներ չորս տրամ անգլիական աղ ջուրի մեջ հալեցնելով խմենք»:

Ինչպես տեսանք, անկախ այն փաստից, թե Տերոյենցը հոգևորական կո-

ում շունի, հիմնականում քննադատվել է կրոնական համոզմունքների համար, համարվել անվեղար մի կրոնավոր¹⁹։

* * *

Հոգևորականությունից հետո Պարոնյանը անողոր քննադատության է ենթարկել հայ լիբերալիզմին, հանձին նրա երկու ամենաականավոր ներկայացուցիչներին՝ Գրիգոր Արծրունու, Նահապետ Ռուսինյանի, ինչպես և մի շարք խմբագիրների ու հասարակական գործիչների։ Այստեղ էլ կիրառում է անողոր դաժանություն, հաշվի չառնելով նրանց ո՛չ հասարակական դիրքը, ոչ պաշտոնը, ոչ էլ կյանքում վայելած համակրությունը։ Գաղափարական զիջում չկատարելով, ումանց քննադատում է ավելի զուսպ, փափկանկատ ոճով, ումանց նկատմամբ կիրառում է թունոտ ծաղրը։ Մի քանիսի պատկերի մեջ երևում են ետպատերազմյան մտավոր տեղաշարժերը, ջոջերի հոգեբանական բեկումը, սկզբունքայնության, արժանապատվության զեղջը, հետաքրքրական մի երևույթ, որին երգիծաբանը հարկադրված եղավ անդրադառնալ առանձին՝ «Լեծապատիվ մուրացկաններում»։

Նախ տեսնենք, թե հեղինակի ակնոցով ինչպես են երևում հայ լիբերալիզմի երկու ականավոր ներկայացուցիչներ՝ Գր. Արծրունին և Նահապետ Ռուսինյանը։ Սրանք նկատելի դեր են կատարել հասարակական կյանքում, առաջինն իր «ԼՂակ» լրագրով, երկրորդը՝ սահմանադրական շարժման մասնակցությամբ և աշխարհաբարի համար մղած պայքարով։ Պարոնյանը նրանց մոտ չի նկատում բարոյական արատներ, անձնական շահագրգռվածություն, կեղծիք, խաբերայություն։ Ընդհակառակը, ներկայացնում է անշահախնդիր զաղափարապաշտներ, ազնիվ, վեհ հոգու տեր մարդիկ։ Բարձր է գնահատում Արծրունու ծառայությունը կրթական նպատակներ հետապնդող ընկերությունների ստեղծման, նրանց օժանդակելու ուղղությամբ։ Գրում է, որ Արծրունին «վերջին աստիճան ուղիղ մարդ է և ժողովուրդը վստահությամբ հազար ուրիշի կհանձնե իրեն, որ ընկերության մը ղրկե»²⁰։

Ազնիվ ձգտումներ է վերագրում նաև Ռուսինյանին, գտնում, որ վերջինս իր ժողովրդին անշահախնդիր ծառայելու զաղափարով է գործում։

Սակայն այս բոլորով հանդերձ, երկիծական դիմանկարների մեջ Գալֆայանից, Տերոյենցից հետո ամենից խիստը այս երկու անձնավորություններին նվիրված հատվածներն են։ Ո՞րն է սրա զաղտնիքը։ Պարոնյանի կարծիքով քաղաքական այդ գործիչների հասարակական դիրքը նրանց դարձրել էր այնպիսի շարժման ղեկավարներ, որը օգուտ չի բերել հայ ժողովրդի դժբախտ ճակատագրին։ Արծրունին գերմանական դաստիարակությունից բերած ղեկատռմանը, մուսուլմանական հեղափոխության զաղափարներով փորձել էին հախուռն նորամուծություններ մտցնել հայկական կյանքում, սռանց հաշվի առնելու նրա առանձնահատկությունները։

Արծրունուն նվիրված դիմանկարը զրված է ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1880 թ., երբ հայ բուրժուազիայի ծրագրերը ջուրն էին ընկել, իսկ նրա անխոհեմ որոշ առաջնորդները ղեռ շարունակում էին արկածախնդրական

¹⁹ Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 50—51։

²⁰ Պարոնյանի ակնարկը վերաբերում է իրական փաստի։ Արծրունին կատարել էր հանդանակություն, արդյունքը ուղարկել Պոլիս՝ հատկացնելու դավառում րացվելիք զպրոցներին։

իրենց քաղաքականությունը այն պայմաններում, երբ և՛ բնական, և՛ դիվանագիտությունը քաշվել էր մի կողմ՝ հայ անմեղ ժողովրդին թողնելով սուլթանական բռնապետության դիշատիչ երախում։ Գավառում մոլեղնում էր թալանն ու հայերի մասնակի կոտորածը։ Այս պայմաններում, հեռվում նստած, «Մշակի» էջերից մեղադրել տաճկահայերին ոչխարային անտարբերության ու թուլության մեջ, նշանակում էր շհասկանալ իրականությունը։ Պարոնյանը Արծրունուն ծաղրում էր հիմնականում դրա համար։ Ռուսական բանակի Կարին հասնելու բավական էր համարել, որպեսզի Կարինը դառնա Հայաստանի մայրաքաղաքը, և Ազգային իշխանությունները Պոլսից տեղափոխվեն այնտեղ։ «Կր կսրծեր անշուշտ,— գրում է Երզնասերը,— թե Կարին նամակ դրկելու չափ դուրին բան է պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Հայաստան դրկելը»։ Այս շարունակում է. «Եվ Արծրունին պոլսեցիներուն այս անտարբերությանը վրա սրդողելով կմկրտեր պանոնք թեթև, կեղծ ազգասեր, շուներու և կովերու խառնուրդ և ուրիշ այնպիսի ածականներով, զորս լրագրի մը մեջ հրատարակելու համար մարդս անպատճառ զերմանական զրոշակ ունենալու է»²¹։

Երզնասերը բնորոշում է, որ Արծրունու մոտ ազգասիրությունը դիմակ չէ անձնական փառքի կամ շահի հասնելու համար, ինչպիսին դիմակ էր Գալֆայանի, Քաղանձյանի և ուրիշների մոտ։ Նա գրում է. «Իբրև հայ ազգասեր է, իբրև խմբագիր անխոնջ զրոյ և կովող... վերջին աստիճան ուղիղ մարդ է»։

Ի դեպ, Պարոնյանը սխալվում է երբ Արծրունու քաղաքական ծրագիրը բնազատիկ կանգ է առնում հիմնականում վերնաշինքային երևույթների վրա։ Գերազանցապես արևմտահայ լիբերալիզմին էր հատուկ իդեալիստական այն տեսակետը, թե հայ ժողովրդի մտավոր և բարոյական վիճակը, նրա քրիստոնյա լինելը նկատի առնելով է, որ օտար պետությունները պիտի խղճան ու ազատեն հայերին թուրքական բռնակալությունից։ Արծրունին շատ ավելի իրական պայմաններ էր տեսնում, երբում էր սոցիալ-տնտեսական զործոնից։ Տաճկահայաստանի տնտեսական հարստությունների մասին Թիֆլիսում կարդացած նրա ծրագրային դասախոսությունը հետապնդում էր մի նպատակ՝ և՛ բնական, և՛ արհեստական ուղղությունը բեկել այդ երկրի տնտեսական հնարավորությունների վրա, հայ բուրժուազիային հետաքրքրել երկրի բնական հարստություններով²²։

Ռուսիայանը եղել է արևմտահայերի լուսավորական, կրթական շարժման խոշոր ներկայացուցիչներից մեկը, Ազգային ժողովի երկարամյա անդամ կամ նախագահ, այդ յուրահատուկ պառլամենտում ունեցել է բացարձակ հեղինակություն Գր. Օսյանի հետ միասին։ Բժշկական կրթությունն ստանալով Փարիզում, այն էլ 1848 թ. ֆրանսիական հեղափոխության տարիներին, տարվել է ժամանակի բնագիտությամբ, նկատելի չափով հեռանալով կրթական զոգմաներից, խանդավառվել բռնապետության դեմ խմբովոր մասսայական շարժումներով ու հեղափոխական զաղափարախոսությամբ։ Այսպիսի լայն ու խոր ազդեցությամբ վերադարձել է Կ. Պոլիս, մի քանի ընկերների հետ ձեռնարկել հասարակական կյանքի վերափոխմանը՝ զերազանցապես հիմք բնորոշելով մշակութային զործոնը։

²¹ Երկրի ժողովածու, հատ. 2, էջ 162։

²² Գ. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1878։

Պարոնյանը Ռուսինյանին քննադատում է նույն դիրքերից, ինչ Գրիգոր Արծրունուն, քննադատում էր այն բանի համար, որ հասարակական կյանքի վրա ազդելու ցանկություն ունեցող մարդիկ պետք է լավ ըմբռնեն այդ կյանքի շարժիչ գույանակները, իրենց ծրագրերը կազմեն իրական հնարավորությունների վրա, չկառուցեն օգային ամբողջներ: Վերցնենք լեզվաշինարարության հարցը: 1850-ական թվականներից Ռուսինյանը հրապարակ եկավ աշխարհաբարի կրթոտ պաշտպանությամբ, մոլեգին սլաքար մղելով գրարարի դեմ: Հրատարակեց իր «Ուղղախոսություն» աշխատությունը, որի առաջաբանում գիտականորեն հիմնավորելով գրաբարի մեռած լինելը, գրական լեզվի ստեղծման ու մշակման անհրաժեշտությունը, վրիպեց գրքի երկրորդ մասում, որտեղ շարադրում էր իր պատկերացրած աշխարհաբարի քերականությունը, առաջարկելով լեզվի ընդհանուր օրինաչափությունից չբխող դեղատոմսեր: Փոխանակ գնալու դեպի ժողովուրդը, ուսումնասիրելու նրա լեզուն և դրա վրա կառուցելու իր օրենքները, Պոլսում նստած, նա ստեղծում է արհեստական մի լեզու և փորձում այն պարտադրել ժողովրդին:

«1853-ին իր լեզվին օրենքներ դնելով զանոնք ի լույս ածեց «Ուղղախոսություն» անունը տալով անոնց, ինչպես Ալաճաճյան ալ սլախակալ լուգի անունը կուտա իր «Փունջին»: Քանի մը շար մարդիկ «Ուղղախոսության» Մոսխոսություն անունը տվին, սակայն Ռուսինյան չվհատեցավ, ինքն ալ համոզված էր որ իրմե զատ բոլոր մարդիկ ծուռ ըլլալուն՝ իր քերականության ասանկ գեշ անուն մը կուտան: Եվ նահապետ գրիշը ձեռքն չէր ձգեր. կը նմաներ այն դերձակին, որ վոխանակ կերպասը մարմնույն համեմատ ձեկելու, մարդը իր շինած զգեստին հարմարեցնելու կաշխատի...»:

Չնայած Ռուսինյանի վայելած մեծ հեղինակությանն ու հարգանքին՝ նրա հորինած լեզուն, որը պատկերավոր կերպով Պարոնյանը համեմատում է աշտարակաշինության հետ, չօգտագործվեց ոչ մամուլի և ոչ էլ գրողների կողմից ու այնպես էլ մոռացվեց: Այդ լեզվով գրեց ինքը «Կիլիկիա» հայտնի բանաստեղծությունը, նաև ավելի թույլ արժեքի մի քանի ոտանավորներ և թարգմանեց Վ. Հյուգոյի «Ռի Բլաս» պիեսը, որի լեզուն նկատի ունենալով Պարոնյանը հետևյալ ոչնչացնող տողերն է գրել. «Խել մը բաներ գրելե ետքը Վիկթոր Հյուգոյի հաճությամբ անոր Խիլի Պլաս անուն եղերգը թարգմանեց և բաջությամբ սպաննեց զՌյու Պլաս ինչպես որ ուրիշ մեկն ալ նույն հեղինակին Նոթո Տամ եկեղեցին քանդեց թարգմանելով»²³:

Վերջին ակնարկը վերաբերում է զմյուռնիացի մտավորական բազմա-վաստակ թարգմանիչ Մեսրոպ Նուպարյանին, որի թարգմանությունը այժմ էլ չի կորցրել իր նշանակությունը, թեև գրված է մանվածապատ ու խրթին աշխարհաբարով:

Պարոնյանը դիմանկարի վերջում առանց խնայելու Ռուսինյանին՝ կատարում է շատ շարաշուք մի գուշակություն. «Գլուխը ամուր ու անառիկ բերդ մըն է, բնավ չի համոզվիր... միայն թե ներքին հեղափոխությունն մը կվախցվի է որ այդ գլխուն մեջ շարունակ կպատահի»:

Այս տողերը գրվելուց մեկ հնգամյակ հետո Ռուսինյանը արդարև վախճանվեց ...ուղեղի խանգարումից: Նրգիծաբանը այդ թվին խմբագրում էր «Լույս» պարբերականը, որտեղ ոչ մի տող չգրեց նրա մասին...

²³ Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 274:

Շատ էր անողորմ:

Պոլսահայ բերթերի խմբագիրներին մի քանիսն էլ ընկել են «Ազգային ջոջերի» շարքը: Դրանք են «Մասիսի» խմբագիր Կարապետ Ութուճյանը, «Մանգումնի» խմբագիր Կարապետ Փանոսյանը, «Ժամանակի» խմբագիր Ստեփան Փափազյանը:

Ինչպես նշել ենք իր տեղում, Պարոնյանը դեռևս 1874—1875 թթ. դրել էր այս մարդկանց երգիծական կենսագրությունները, բայց կատակաբանության սահմանից դուրս չէր եկել, որովհետև նախապատերազմյան տարիների նրանց գործունեությունը ընդհանուր առմամբ համընթաց էր օրվա կարգախոսին՝ ազգապահպանման գաղափարին, մինչդեռ այժմ, պատերազմը հաղթի ավարտված, համիդյան խստություններն սկսված, նրանք փոխել էին իրենց քաղաքական վարքագիծը, հաշտվողական գիրք բռնել սուլթանական կառավարության նկատմամբ: Պարոնյանն էլ փոխում է իր զենքը: Այլևս նախկին կատակաբանը չէ, խոժոռաղեմ է, խիստ, զայրալից, երբեմն թունոտ:

Նախ Ութուճյանի մասին: Ութուճյանը Փարիզում կրթություն ստացած, ֆրանսերենը հիմնովին յուրացրած մի մարդ է, որ 1852—1884 թթ. խմբագրել է «Մասիս» թերթը, նրա էջերում ստորագրելով հարյուրավոր հոդվածներ, առաջնորդողներ, ակնարկներ. եղել է շափավոր մտածող, հասարակական կյանքի վայրիվերումների, հուզումների հետ միասին ապրել է գաղափարական զիզազանքներ: Սահմանադրական շարժման առաջին տարիներին և ուսթուրքական պատերազմի շրջանում նրա թերթը ձեռք է բերել նկատելի ժողովրդականություն, լայն տարածում գտել ոչ միայն արևմտահայ իրականությունում, այլև Կովկասում, որտեղ «Մշակը» և այլ պարբերականներ արտատպություններ էին կատարում «Մասիսից»:

Ութուճյանը ուշագրավ աշխատանք է կատարել աշխարհաբարի զարգացման, հրապարակախոսական լեզվի մշակման ուղղությամբ, թեև հասել է որոշ ծայրահեղությունների, որոնք ծաղրվել են Պարոնյանի կողմից:

Նա ֆրանսերենից թարգմանել է 20-ից ավելի վեպեր: Դրանցից շատերը պարզ ընթերցանության գրքեր չէին, արկածային այնպիսի վեպեր, որոնցով ողողված էր գրական հրապարակը, կապված էին հայ հասարակական կյանքը հուզող հարցերի հետ, ինչպես էոթեն Սյուի «Խափառական հրեայի» 4 հատորները, ինկվիզիցիայի ահուկի ոճիները մերկացնող «Հավատաքննության գաղտնիքները», «Վերվիլիի երեքը» և այլն:

Պարոնյանը Ութուճյանի օձիքից բռնել, «Ազգային ջոջերի» շարքում բազմեցրել է այն թվականին (1879), երբ վերջինս ուներ մոտ 30-ամյա վաստակ և արդեն կատարել էր մեր թվարկած աշխատանքները: Ուստի երգիծաբանի գնահատականը փաստորեն վերաբերում է նրա ողջ գործունեությանը:

Արդ՝ ի՞նչն է ընդունում, ինչը ժխտում:

Ընդունում է «Մասիսի» խմբագրի աշխատասիրությունը, նվիրվածությունը, «արդարության ջերմ և նախանձախնդիր» լինելը, առանց զավեշտական որևէ երանգի բարձր է գնահատում արդեն մեր հիշատակած թարգմանությունները, որոնցից վերջինի համար Տերոյինցը թարգմանչին մեղադրել էր սոցիալիստական սկզբունքների պաշտպանության մեջ, չնայած այդ գրքի գաղափարախոսությունը դուրս չի գալիս քրիստոնեական բարոյախոսությունից:

Պարոնյանը Ութուճյանին քննադատում է ամենից առաջ իր թերթը հա-

րուստ դասի և սուլթանական կառավարության շահերին ծառայեցնելու, պատրիարքարանի, կրոնական իշխանությունների թերութունների նկատմամբ աչք փակելով՝ նրանց անտեղի թմբկահարելու, ստորաքարշ ու շողորթող ոճով կառավարական որոշումները, պարզևատրումները բնթերցողներին հայտնելու համար, իմանալով հանդերձ, որ թուրք կամ հայ բարձրաստիճան այդ պաշտոնյաները շքանշաններ էին ստանում բացառապես բռնապետական կարգերի հրահանգները անթերի կատարելու համար: Միաժամանակ նրան համարում է խորամանկ, շրջահայաց, բարդ իրադրությունների մեջ գլուխը չկորցնող, հեշտ կողմնորոշվող, տոկուն մի մարդ:

«Տարակույս չունինք, որ եթե Կալիգուլայի օրով խմբագրության պաշտոնի մեջ գտնված ըլլար՝ գովաբանելով պիտի դրվատեր Կալիգուլայի այն որոշումն, որով ձին Նյուպատոս անվանել կուզեր և անշուշտ խմբագրական հոդվածով մը ձին ալ պիտի շնորհավորեր ըսելով.

«Հռովմայեցիներու համար նոր դարագլուխ մը բացվեցավ: Մինչև հիմա Նյուպատոսները իրենց պաշտոնը շարաշար գործածելով՝ ժողովրդյան դանդառներուն առիթ տված էին: Բարեխնամ Կալիգուլա կայսրը ժողովրդյան դանգատներն ու բողոքները նկատողության առած ժամանակը փափաքելով մի անգամ ընդմիջտ անոնց վերջ տալ՝ Նյուպատոսն յուր պաշտոնին հրաժարեցուց և անոր տեղ անվանեց յուր հավատարիմ վսեմափայլ ձին, որուն մատուցած ծառայություններն արդեն ծանոթ են մեր ազգայիններուն: Քաջահույս ենք, որ նորրևտի հայրենասեր և արդարակորով ձին յուր խոհական և փորձյալ քաղաքագիտությամբ ամեն ճիգ պիտի թափեր ևրկրին և ժամանակին պահանջումներում համեմատ բարեկարգություններ բնելով ժողովրդյան հարկն ու համարումն իրեն գրավել»²⁴:

Ապա երգիծաբանն ասում է, թե նման մի առաջնորդողից հետո, Ութուճյանը կարող էր իր թերթի ներքին լուրերի մեջ գրել. «Երեկ գիշեր վսեմափայլ Նյուպատոսին ախոռին մեջ կոշումք տրվեցավ դիվանագետներուն, բոլոր երևելի ջորիներն իրենց ազնվաշուք բնտանիքներովն և նշանավոր էշերն պարահանգեսի զգեստով մեծ փայլ մը կուտային սույն շքեղ հանգեսին: Էշերուն կենացը դավաթները պարպվեցան»:

Մենք դիտմամբ ընդարձակ մեջբերում կատարեցինք Կ. Ութուճյանին նվիրված դիմանկարից, որովհետև այն ոչ միայն բացահայտում է երգիծաբանի վերաբերմունքը դեպի «Մասիսի» խմբագիրը, որի քծնական, շողորթոթող հատկանիշները փայլուն կերպով տրված են այդ տողերի մեջ, այլև նրա թունոտ ծաղրը բռնապետական կարգերի՝ Արդուլ Համիդի ու նրա վեդիքների նկատմամբ: Դժվար չէ հանձնել Կալիգուլայի ճանաչել սուլթան Համիդին, որի նշանակումները շատ տարբեր չէին հռոմեացի կայսեր քմահաճ նշանակումներից: Սուլթանի շնորհին արժանացածների մեջ կային և հայ պաշտոնյաներ, որոնք հայ էին անունով ու կրոնական ծիսակատարությունների ձևական մասնակցությամբ, սակայն իրականում Կալիգուլայի հռչակավոր ձիու դերն էին կատարում, արժանանալով ստորագրաս պաշտոնյաների հարկադիր «հարգանքին»:

Ութուճյանը հեշտ կուլ շտվեց դառը ղեղահատները: Նա «Մասիսում» հրատարակեց իր աշխատակցի հոդվածը Պարոնյանի «Պտույտ մը Պոլսո

²⁴ Նույն տեղում, էջ 58—59:

թաղերու մեջ» դրքի մասին և նրան կցեց թունոտ մի ծանոթագրություն, բայց ի պատիվ նրա պետք է խոստովանել, որ Պարոնյանի դեմ մղած պայքարում չդիմեց քաղաքական շանտաժի, մատնության թեկուզ այն բանի համար, որ Պարոնյանը, ծաղրելով Ութուճյանին, Կալիզուլայի ձիու օրինակով փաստորեն ծաղրում էր պետությանը: «Մասիսի» խմբագիրը շրջահայաց և զգույշ մարդ էր, վտանգներով հղի մի բացահայտում կլիներ դա ուս-թուրքական պատերազմին հաջորդող ուսկընթացի շրջանում:

Այլ տեսանկյունից է մոտենում «Ջոշերի» հեղինակը Կարապետ Փանոսյանին: Նրա մասին խոսելիս ավելի ներողամիտ է: Փանոսյանը խմբագրական ասպարեզ մտնելու առաջին տարիներին՝ հրատարակելով «Մյունատիի էրեճիաս» թերթը, կանգնած է եղել դեմոկրատական դիրքերում, Սվաճյանի «Մեղվի» կողքին և անողոք պայքար է մղել խավարամուլների դեմ, իր պաշտպանության տակ առնելով Միքայել Նալբանդյանին, ընդդեմ Տերոյանցի հարձակումների: Սակայն հետագայում աստիճանաբար թեքվել է դեպի լիբերալիզմը, հատկապես 70-ական թվականների սկզբներին: Առաջին շրջանում նա ոչ միայն իր թերթով է հարձակումներ գործել հետագեմ հոսանքի դեմ, կատարել խստադույն մերկացումներ, որոնց պատճառով հաճախ փակվել է նրա թերթը, ձերբակալվել խմբագիրը, այլև հայատառ թուրքերին մի շարք բողջուրներով, որոնց մեջ քննադատել է պատրիարքարանի, հոգևորական իշխանությունների գործունեությունը, պահանջելով սահմանադրության դեմոկրատացում, եկեղեցական հատկապես ամուսնական օրենքների բարեփոխում և այլն:

Ցույց տալու համար, թե Փանոսյանի «Մյունատի» պայքարի ինչպիսի լայն ճակատ էր բռնել, երգիծաբանը գրում է. «Ամիրան ու արհեստավորը, կաթողիկոսն ու փոքրավորը, հարուստն ու աղքատը, ամեն բաժանորդ էր այս լրագրին հարձակումներուն, որոնք արդարացի ըլլալով լավ ընդունելություն կգտնեին ժողովուրդեն, որ մինչև այն ատեն կկարծեր թե ամիրայի մը թաշկինակին դեմ խոսիլը ևրկնից դեմ ապստամբիլ էր»...: Փանոսյանի այդ տարիների քաղաքական բնութագիրը ամբողջացնում է հայտնելով թե Զեյթունի ապստամբության օրերին նա այնպիսի արմատական գիրք է բռնել, որը պատճառ է դարձել թերթի արգելման, բայց «խափանում, բանտարկություն բնավ նշանակություն չունեն յուր առջև, մանավանդ բանտն, որ իրեն համար առանց վարձու սենյակի մը մեջ նստիլ էր»:

Պարոնյանը հիշատակում է նրա մի այլ գործունեությունն էլ՝ նիկոմեդիայում 1866 թ. ծայր առած սուլի օրերին, երբ «մեր հարուստներն իրենց սուլուրի շտեմարաններուն և ոսկիի սնտուկներուն հարյուր փականք» էին կախել: Այդ օրերին արհեստավորներից և այլ մարդկանցից դամարներ հավաքելով, այլուր է գնում և ուղարկում սուլյայներին, «որք եթե Ազգային ժողովին որոշմանն սպասելին՝ անդիի աշխարհին մեջ պիտի տեսնեին այլուրի երեսը»:

Երգիծաբանը արժանին մատուցել է այն մարդուն, որը 60-ական թվականներին կանգնած էր «Մեղվի» կողքին: Սակայն հետագայում Փանոսյանը գիջեց, սկսեց հաշտվողական դիրք բռնել մեծամեծների նկատմամբ, անխուհամ կերպով քննադատելով այն մարդկանց, որոնք ոգի ի բռին նվիրված էին դավառի հայությունը օգնելու գործին, միաժամանակ զովաբանեց մարդկանց, որոնք հանրօգուտ որևէ գործ չէին կատարել, ընդհակառակը արժանի էին

պարսավանքի: «Շատ անգամ թագ կը շինե այնպիսի անձերու, որոնց ես մա-
ղերը կը փետտեմ»:

Այս դիմանկարի մեջ լայն տեղ է հատկացված լիբերալ մամուլի քննա-
դատությանը, ետպատերազմյան այն երևույթին, երբ թերթերը, հնարավո-
րություն չունենալով դրել ազգային հարցերի մասին, իրենց սյունակները
լցնում էին միմյանց դեմ ուղղված դատարկ վեճերով, լուրջ կերպարանք տա-
լով այնպիսի հարցերի, որոնք արժանի չէին մամուլի ուշադրությանը: Նման
առիթներով թերթերը ամիսներով միմյանց դեմ նիզակներ էին ճոճում,
խրոխտ դիրք ընդունում, իրենց դիտլիթները ասպարեզ բերում, ասենք ա-
պացուցելու համար, թե կենդանի բառը ինչպես կարելի է մեկնաբանել:

Այս առիթով է, որ Պարոնյանը մեջ է բերում դեռևս «Մեղվում» տպագրած
իր մի երկը, նվիրված «Մանգումեի» և «Օրադրի» մի վեճին: Երգիծական այդ
չքնաղ գոհարը, որտեղ հիմնական հերոսներն են վերոհիշյալ երկու թերթերի
խմբագիրները, օժանդակությամբ դիցաբանական աստվածների, գրված է
«Իլիականի» վերամբարձ ոճով: Հեղինակը ամբողջ զավեշտականը կառուցել
է հանդիսավոր ձևի և միանգամայն դատարկ բովանդակության վրա: Նկատի
ունենալով, որ այլ առիթով ընդարձակ մեջբերում ենք կատարել նրանից, այս-
տեղ զանց ենք առնում:

Վերջապես Պարոնյանը ծաղրում է Փանոսյանի մանկավարժական գոր-
ծունեությունը, նրա Ազգայան դպրոցը, որտեղ փոխանակ կյանքի համար
պիտանի գիտելիքներ տալու աղջիկներին, նրանց սովորեցնում էին երգել,
սլաքել, նվագել:

* * *

«Ազգային ջոջերում» տեղ են գտել տասից ավելի հասարակական գոր-
ծիչներ, որոնք իշխող դիրք են գրավել արևմտահայերի Ազգային ժողովում
կամ կրթական հաստատություններում: Գրեթե բոլորն էլ գործել են հայկա-
կան միջավայրում, ճանաչված են եղել հայկական շրջաններում, ինչպես
Քրիստոստուր Ղազարոսյանը, Հարություն Մերյեմ Գուլին, Տիգրան Յուսուֆ-
յանը, Ստեփան Փափազյանը, Հովսեփ Շիշմանյանը, Ստ. Ասլանյանը և
այլն:

Սրանց մեծ մասը Ազգային սահմանադրության հռչակման խանդավառ
օրերին կատարել են որոշ դեր, ճառեր են արտասանել հօգուտ հայ ժողովրդի
ազատության, հողվածներ են գրել, ունեցել են կրթական-լուսավորական
գործունեություն, սակայն քաղաքական նոր պայմաններում, արագորեն նա-
հանջել են, հաշտվողական դիրք բռնել կառավարության նկատմամբ, պայ-
քարի դուրս եկել դեմոկրատական հոսանքի դեմ: Նրանց մասին Պարոնյանը
հաճախ է գրել «Մեղվում» կամ «Թատրոնում», այն տարիներին, երբ պոռթ-
կում էր սահմանադրական խանդավառությունը և այդ մարդկանց գործու-
նեությունը դիտվում էր դրական կողմով: Երգիծաբանը գուցե միակն էր, որ
չէր խաբվում պատրանքներով: Այժմ, երբ փոխվել էին ժամանակները և
նրանք փաստորեն գործում էին ժողովրդի շահերի դեմ, երգիծաբանն էլ
դառնում է ավելի անողոր, ավելի խայթող:

Ահա Ստեփան Ասլանյանը: Նա մայրենի դաստիարակությունն ստացել
է Սկյուտարիի ճեմարանում, ապա սովորել օսմանյան բժշկական վարժարա-

նում, որից հետո մասնագիտությունը կատարելագործելի՝ Վիեննայում, Վերադառնալով ծննդավայրը, աշխատել է որպես ղինվորական բժիշկ, բարձրացել մինչև փաշայության աստիճանի, սերտորեն կապվելով թուրքական վերնախավի հետ։ Հասկանալի է, որ նման մի անձնավորություն, գործելով հայ ազգային մարմիններում, պետք է անցկացներ կառավարության քաղաքական գիծը, անտեսել հայ ժողովրդի շահերը։

Հակառակ Ասլանյանի գրաված դիրքին և պաշտոնական հանգամանքին՝ երգիծարանը նրան հենց այդպես էլ ներկայացնում է, թեև գնահատումների մեջ զգույշ է։ Գնահատում է այն պայքարը, որ Ասլանյանը մղել է սահմանադրության առաջին շրջանում, ամիրանների տիրապետության դեմ, սակայն սուր ծաղրի է ենթարկում նրան այն բանի համար, որ սահմանադրության հաղթանակից հետո սարսափել է ժողովրդի պահանջած ազատությունից և դենքը դարձրել է նրա դիմ։

«1863-ին Քաղաքական ժողովո անդամ եղավ, և առաջարկեց, որ ազգային լրագիրներուն բերանը սանձ դրվի։ Սահմանադրության բարեկամն մը ասանկ առաջարկություն լսելը շատերուն զարմանք պատճառեց, բայց արդարացուց ինքզինք, առարկելով, թե սանձ դրվի ըսի, բայց չըսի թե սանձ դրվելն ետքը կառքերու լծվին»²⁵։

Ստ. Ասլանյանի ատենապետության, այսինքն՝ նախագահության տարիները Ազգային ժողովի անգործության տարիներն էին, երբ նա, ամենայն հավանականությամբ կառավարության առաջադրանքով, խուսափում էր քաղաքական բնույթ կրող հարցերի քննարկումից։ Պարոնյանը այդ բանն է ծաղրում, գրելով. «Երբեմն ալ ատենապետությունը վարեց այն նավապետին սլես, որ նավուն մորիկի բռնված ժամանակը օթյակը կը քաշվի և հրաժարական կը գրեն նավուն տերերուն։ Ի վերա այսր ամենայնի՝ խոստովանինք նաև, թե մեծ հարմարություն ունի ժողովը կառավարելու... երբ մորիկ չկա... Այսպես, վեց յոթ տարի ատենապետության պաշտոն վարած է։ Թեպետև եթե այսօր օրակարգը աչքն անցնելու ըլլանք, կը տեսնենք, որ ուրիշ բան չէ, եթե ոչ բանտ մը, որուն մեջ յոթ տարի է ի վեր բանտարկված խնդիրներ կան զորս հարցնող, փնտրող չկա, մեռած խնդիրներ ալ պակաս չեն հոն»²⁶։

Փաստաբան Տիգրան Յուսուֆյանի մասին գրված գիմանկարը աչքի է ընկնում յուրահատուկ մի առանձնահատկությամբ։ Դա միակ «ջոջն» է, որտեղ հեղինակը ղինվագիտություն է բանեցնում, իր կարծիքները հայտնելիս, մեղադրանքի առիթ չտալու համար՝ շոյող նախադասություններ է որոնում, կարծեք ժխտում է այն, ինչ նախորդ նախադասությամբ հաստատել է, բայց երբեք գաղափարական գիշում չի կատարում, ընդհակառակը, խայթում է ցավացնելու աստիճան, քննադատում է նրա մեծապետական հոխորտանքները, շահամոլությունը, անխղճությունը, անգամ խարդախությունը։

Յուսուֆյանն իր կրթությունը ստացել է Փարիզում, հետևել առևտրի ճյուղին, սակայն, վերադառնալով Կ. Պոլիս, այդ աշխատանքին զուգընթաց զբաղվում է իրավաբանությամբ։ Պարոնյանը նրա վաճառականական գործունեությունը համարում է գողություն, իսկ իրավաբանականը՝ խաբեբայություն։

²⁵ Նույն տեղում, էջ 37։

²⁶ Նույն տեղում, էջ 38։

«Մեծ հաջողություն ցույց տվավ այն ուսման, զոր մենք վաճառակա-
նություն կանվանենք և որուն խաբեությունն անունը կը կարգա Վուլբնարկ:
Քիչ ատենի մեջ կատարյալ սորվեցավ մարդ խաբելու սկզբունքներն, զորս
պիտի գործադրեր վաճառականության մեջ»: Պատմելով նրա իրավարան
դառնալը, Պարոնյանը նախ սալիս է իր ժամանակի արդարադատության
սպանիչ բնութագիրը հետևյալ ընդհանրացնող տուրերով. «նախնիք Արդա-
րադատությունը տեսած պիտի ըլլան, որ դայն կշիռ ի ձեռին կը ներկայաց-
նեն. անոր բարի ըլլալն ալ ճանչցած են անշուշտ, որ այնչափ հարգ ու պա-
տիվ կընծայեն անոր. մենք դժբախտաբար ժողովներու մեջ ալ իրեն հան-
դիպած չունինք, որ տեսներն, ճանչնայինք և կարենայինք այսօր ըսել, թե
Յուսուֆյան շատ լավ կամ գեշ կը վարվի Արդարության հետ»:

Այս բնութագրումից հետո արդեն ավելի կոնկրետ է դարձնում իր միտ-
քը, գրելով. «Շատերը, որ մոտեն կը ճանչնան Յուսուֆյան էֆենտին, կըսեն
թե Արդարության ներկայացուցիչն է ան և թե Արդարության պես կշիռ մը
ունի ձեռքը, սակայն պնդողներ այլ կը գտնվին, թե այդ կշիռը ծախու առն-
ված է նպարավաճառե մը, որ պակաս կշռելու համար ամեն օր տուգանք կը
վճարեր: Աս անհավատալի է»: Ինչո՞ւ է Պարոնյանը կատարում այս վերջին
«անհավատալի է» վերապահությունը. արդյոք դրանով ուզո՞ւմ է հերքել
ծանր մեղադրանքը: Եթե այդպես է, կարող էր չգրել: Այդ նախադասությունը
տակտիկական քայլ է, որպեսզի Տիգրան Յուսուֆյան պատվո դատ բաց չանի
իր դեմ: Դա երևում է հենց նույն նախադասության հաջորդող հետևյալ տո-
ղերից.

«Կը տեսնե՞ք՝ փաստաբանները ինչպես ուշի ուշով մտիկ կընեն, որ-
պեսզի կետ մը բռնեն և ինձի դեմ դատ բանալ տալով՝ բառասուն-հիսուն ոս-
կի վաստկին: Պարոն փաստաբաններ, մի պարծենաք կենսագրություննե-
րու մեջ գիս դատի հրավիրելու բնություն ունեցող կետեր գտնելնուդ վրա,
որովհետև կենսագրություններս կազմող բոլոր կետերն նույն բնությունն ու-
նին...: Բայց քանի որ ձեզմե շատերը հողվածի մը մեջ ավելի իրենց գործ կը
փնտրեն, քան թե արդարություն, ես ալ խոհեմություն կը բանեցնեմ և խոսքս
կը փոխեմ: Առանց ասոնց կամ անոնց ըսածներուն ականջ կախելու, ես
կըսեմ թե Տիգրան էֆենտի Յուսուֆյան միշտ արդարությամբ վարված է,
որովհետև ուրիշ կերպով վարվիլ անկարելի է»²⁷:

Իսկապես փոխո՞ւմ է խոսքը: Պատասխանը տալիս է հենց հաջորդ նա-
խադասությունը: «Մեր բոլոր ժողովներուն մեջ արդարությունը միշտ կը փայ-
լի յուր բացակայությամբ: Տիգրան էֆենտի շատ ճշտություն կը պահե յուր
պաշտոնին մեջ»:

Կարծեք կատվի ու մկան խաղ է խաղում. մերթ բռնում է իր որսի կոկոր-
դից, սեղմում շունչը հանելու, յացացնելու աստիճան, մերթ թույլ է տալիս,
որ թփրտա, փորձի աղատվել ճիրաններից, հանգստանա, բայց հազիվ կեն-
դանության նշան ցույց տված՝ նորից է հարձակվում, նորից ճմլում:

Սպանիչ ծաղրի է ենթարկել երգիծաբանը նրա ստեղծագործական կարո-
ղությունները, գրելով. «Իբրև մատենագիր շատ ծառայած է ազգին... չհրա-
տարակելով յուր երկասիրություններն»:

Հարություն Մերեյեմ Գուլիի մասին խոսելիս Պարոնյանը գրում է, թե

27 Նույն տեղում, էջ 19—29:

նրան ևս խթանում է շահույթը, որ ջոջին ներկայացնում է որպես զգույշ, կասկածամիտ մի անձնավորություն, որն ամեն ինչի մեջ փնտրում է օգուտ, անտարրեր է ժողովրդի դժբախտ վիճակի նկատմամբ:

«Մաքրությունն այնքան կը սիրի, որ ձեռները չաղտոտելու համար ուրիշին մատներովը կը քերի պոխր... Եթե հարկ ըլլա ձեռները լվալ՝ դեղագործներին պակաս ջուր կը փնտրէ: Եթե աշխատի մաքրություն մարդս յուր սրտին մեջ ունենար՝ չէր կրնար այս դարուս մեջ ապրիլ. բայց քանի որ ձեռներու մեջ է, փնաս չունի»:

Հայ լիբերալիզմի խոսքի և գործի հակասությունը, սնամեջ ճառերով ժողովրդին խաբելու վարքագիծը Պարոնյանը հիանալիորեն ցուցադրել է ազգային երեսփոխան Ստեփան Փափազյանի երգիծական կենսագրության մեջ: Նա ներկայացնում է այդ մարդուն դիմակով և անդիմակ. դիմակով՝ մի մարդ է, որը «գինեմուլի մը քթին ավելի կարմիր սահմանադրական է», ամբարշտական դասի կատաղի հակառակորդ: Բայց դա երևացողն է: Իրականում նույն կեղծ շահակրատներին է, լավ յուրացրել է ժամանակի ոգին:

Փափազյանի հայրենասիրության կեղծ լինելը Պարոնյանը ձևակերպել է հետևյալ բառերով, «իսկ դալով այն հարցման, թե ժողովրդականությունը ինչու անոր լեզվին ծնավ և ոչ սրտին, կը պատասխանենք, որ մարմնակազմության տեղեկություն ունեցողներուն հայտնի է արդեն, որ լեզուն ասանկ բաներու ծնունդ տալու համար սրտեն ավելի գյուրություններ ունենալով, ժողովրդականությունը չէր ուզեր անոր սրտին ներդրություն պատճառել»:

Ստ. Փափազյանը հրատարակել է հայ ժողովրդի պատմության դասագրքեր, որոնցով երկար տարիներ սովորել են Կ. Պոլսի նախակրթարաններում: Դրանք կազմված էին կղերական պատմագրության սկզբունքներով, պատմական անցյալում ցույց տալով միայն թագավորներ և իշխաններ, իսկ առ անտեսելով նյութական բարիքները ստեղծող ժողովրդին:

«1860-ին սկսավ դասագիրք հորինել յուր աշակերտներուն համար: Հորինեց համառոտ «Ազգային պատմություն» մը, որուն մեջ թագավորներուն այցետոմսերը միայն գրված էին: Աշակերտներն մարդպաններուն, պատրիկներուն, իշխաններուն և թագավորներուն անունները միայն կը սորվեին և կես ժամեն հետք կը մոռնային: Տիկին Մարթա պատուհանին առջևը նստած՝ փողոցեն անցնող մեկու մը վրա ավելի կատարյալ տեղեկություն կրնա տալ, քան Փափազյան յուր հորինած ազգային պատմությամբը հայ գյուղագետներուն վրա....»²⁰:

Պարոնյանը «Ազգային ջոջերի» շարքի մեջ մտցրել է նաև Հովսեփ Շիշմանյանին, բայց մտցրել է ոչ թե որպես զրոգ Մերենցի, որովհետև այդ թվականին դեռ վիպասան Մերենցը գրեթե հայտնի չէր երգիծաբանին, այլ որպես Վատիկանի ոտնձգությունների դեմ պայքարող հակահասունյան շարժման մոլիստանդ ներկայացուցիչներից մեկի: Շիշմանյանի մասին գրվածը «ջոջերի» ամենաթույլ դիտմաններից է:

Դիմանկարներում հանդիպում ենք երեք այլ գործիչների էլ՝ Քրիստոստուր Ղազարոսյանին, Գրիգոր Էնֆիաճյանին և Մկրտիչ Էսայանին: Սրանք երեքն էլ այժմ անծանոթ անուններ են, բայց ժամանակին իրենցով զբաղեցրել

²⁰ Նույն տեղում, էջ 122:

են հասարակական կարծիքն ու մամուլը, որովհետև մոտիկ մասնակցություն են ունեցել հանրային, մշակութային կյանքին:

Երգիծաբանը խստությամբ ծաղրել է Ղազարոսյանին, մենք կասեինք շափազանցության հասցնելով իր ժխտողական վերաբերմունքը, մի մարդու, որը ժամանակակիցների վկայությամբ դրական նշանակալից դեր է կատարել Պոլիս թափված դավառացի երիտասարդությանը դրաճանաչ դարձնելու գործում: Նրա մոտիկ մասնակցությամբ է հիմնվել Անձնանվեր ընկերությունը, որի նպատակն էր ձրի զեկուցումներ կարդալ պանդուխտ հայերի համար, նրանց սովորեցնել գրել, կարդալ, հաշիվ իմանալ: Այդ ծրագիրը կապվում էր ազգահավաքման, ազգապահպանման, ժողովրդի ինքնադիտակցության բարձրացման աշխատանքի հետ:

Քրիստոստուր Ղազարոսյանը եղել է Ազգային ժողովի շատ գործուն անդամներից: Այդ ժողովում նրա արտասանած ճառերը շոշափում են ժողովրդի ստորին խավերին շահազրգուղ հարցեր և ուսանելի են շատ կողմերով: Պարոնյանն էլ է վկայում, որ նա «յուր կարմիր թաշկինակը իբրև ժողովրդյան դրոշ պարզել է ամիրայության դեմ»: Ընդունում է, որ Քրիստոստուրը «Անձնանվեր ընկերության մեջ մեծ ծառայություն ևրած է մեր պանդուխտ եղբայրներուն դաստիարակություն ընելով», սակայն նրան համարում է փառասեր, շարունակ ազգային իշխանություններում մնալու ձգտող, դրանցից ապօրինի ճանապարհով օգտվող, անսկզբունք, տղետ մի անձնավորություն, որ իրեն փաթաթել է ժողովրդի վզին, ծափահարվում է նրանից և ապրում նրա հաշվին:

«Յուր անունովն քիչ մը Քրիստոսին պատվույն դպած է. յուր սատանայություններն մոտեն տեսնողները կըսեին. «Եթե Քրիստոսին տուրքն այս է, պետք է որ Քրիստոնեությունը թողունք»... «Շատերը կըսեին թե Քրիստոստուրի կոկորդն ալ Մայր հաշիվ մէ, հասկցնելու համար, որ շատ հաշիվներ փոխանակ տետրակներուն մեջ անցնելու՝ Քրիստոստուրին կոկորդն անցած են, բայց ինք, որ օրինավորութենէ բնավ չչեղիր, կը պատասխաներ իրենց.— Եթե ապօրինություն կը տեսնաք տետրակներուն մեջ՝ բռնեցեք և պատժեցեք... տետրակները»²⁹:

Հայ լիբերալիզմի աղմուկ աղաղակի սնամեջությունը, ազգային գործիչների փառասիրությունը, դատարկաբանությունը, միաժամանակ նրանց տղիտությունը Պարոնյանը ծաղրել է հետևյալ տողերով. «Ամեն դերասան, կըսե ժան ժառ Բուսո, ծափահարվիլ կուզե, մեր երեսփոխաններն ինչու չունենան այս փափաքն: Որչափ երեսփոխաններ կը գտնվին, որ օրականով մարդ կը վարձեն ժողովո մեջ ծափահարելու համար զիրենք՝ երբ խոսին, երեսփոխաններ, զորս այն ատեն պետք է ծափահարել, երբ չեն խոսիր: Որչափ շողոքորթություններ, քանի տակառ զինիններ կեցցեի մը համար: Ի սկզբան կեցցեներն իրավ շատ սուղ կը ծախվեին, բայց հիմա, որ այս ապրանքը վաճառողները շատցած են՝ զավաթ մը օղիի շուրս կեցցե ծախու կառնվի: Համրն իսկ զավաթ մը խահվելով պերճախոսության մրցանակ կառնե մեր Երեսփոխանական ժողովո մեջ»³⁰:

²⁹ Նույն տեղում, էջ 170:

³⁰ Նույն տեղում:

«Աղղային ջոջեր» շարքում Պարոնյանը տևող է տվել երկու արվեստագետների՝ ճարտարապետ Սարգիս Պալյանին, փորագրիչ արվեստագետ Հովհաննես Մյուհենտիսյանին և մի դրողի՝ Խաչատուր Միսաքյանին:

Իսկույն կարելի է նկատել այն համակիր վերաբերմունքը, որ երգիծաբանը ցույց է տալիս առաջինների նկատմամբ, իսկ բացարձակ ժխտումը՝ Միսաքյանի նկատմամբ:

Պալյանին նվիրված դիմանկարում մասամբ հեռացել է իր ընդհանուր ոճից, գրվածքին տալով չափից ավելի լրջություն, խստորեն հետեւելով փաստական ու ժամանակագրական տվյալներին, ընդարձակ մեջբերումներ կատարելով եվրոպական մամուլից: Իր սոցիալական վիճակով հեղինակի ճամբարից չէ Սարգիս Պալյանը՝ մեծահարուստ, նյութական խոշոր միջոցների տեր, պետական շրջաններում մեծ համբավ վայելող մի գործիչ, որի նմաններին երգիծաբանը տասնյակ առիթներով ծաղրել էր խստորեն, առանց վախենալու անդրադարձ հարվածների ուժգնությունից: Բայց ահա, այստեղ, ոչ միայն չի կիրառում իր ոշնացնող ծաղրը, այլև հեղնաբանությունը, նույնիսկ կատակը: Չի փոխում զենքերը, այլ առհասարակ ցած է դնում դրանք, «ջոջին» դիմավորում անզեն, վարդերով ու դափներեղով: Ո՞րն է գաղտնիքը, դավաճանում սկզբունքների՞ն, որոնց այնքան հավատարիմ է մնացել իր ամբողջ կյանքում: Պարոնյանը սրան մոտենում է ճիշտ նույն չափանիշով, ինչ մոտեցել էր Գալֆայանին, այսինքն՝ որքանով է օգտակար հասարակությանը: Դալֆայանը հոգևորական է, քարոզում է բարոյականություն, համեստություն, ազնվություն, մարդասիրություն, բայց առօրյա կյանքում գործում է այս բողոքի դեմ: Պալյանը հարուստ ամիրա է: Նրա նմաններն առհասարակ անտեսում են, արհամարհում ժողովրդին, ամեն անգամ երբ մի աստիճան բարձրանում են, մի աստիճանով հեռանում են ժողովրդից, ատում են նրան, չեն խոսում մայրենի լեզվով, ապրում են օտար կենցաղով, հոգեբանությամբ էլ միանգամայն խորթ են իրենց ծնող ժողովրդին: Բայց ահա մի ամիրա, որը խոր հակասության մեջ է իր դիրքի ու համբավի հետ. շքանշանները չեն փոխել նրան. պորտաբույծ հարուստներից չէ, չի բարձրացել իր կալվածներից ձեռք բերած եկամուտների հաշվին: Հայտնի ինժեներ է, գիտնական, հեղինակ մի շարք գյուտերի, որոնց է պարտական շքանշանները և ոչ թե սուլթանին մատուցած քաղաքական ծառայություններին: Մի գիտնական է, որի մասին փարիզյան թերթերը խոսում են գովեստով: Սա է նրա հանրային ծառայությունը: Բայց նաև հավատարիմ է իր ժողովրդին: Կենցաղում մնացել է հայ, խոսում է ու գրում մայրենի լեզվով, շնայած հիանալի գիտի թուրքերենն ու ֆրանսերենը, հետաքրքրվում է հայ կյանքով, օգնում ինչքան որ կարող է. օգնում է կրթական, բարեգործական հաստատություններին: Սա էլ՝ նրա ազղային գործունեությունը: Կա ավելին. Պալյանը զբաղվում է նաև հայ մշակույթով, ունի երաժշտական ստեղծագործություններ: Եթե մենք քիչ բան գիտենք նրա «Քրիստափոր Քոլումբոս» օպերայի վերաբերյալ, որն այնուամենայնիվ վկայում է նրա երաժշտական ունակությունների մասին, ապա՝ Պատկանյանի «Արաքսի արտասուքի» համար նրա հորինած երաժշտությունը «Ամենուն բերանն է»:

Պարոնյանի նպատակն է Պալյանի նման մարդկանց հակադրել նույն խավի այն հարուստներին, «որոնք եթե աստիճան մը բարձրանան՝ հայերեն

շխոսելու ուխտ կրենեն. եթե պատվանշան մ'ալ առնին, հայերեն խոսողին ականջեն պատի մը վրա դամելու շափ առաջ կերթան և եթե քիչ մա՛լ բարձրանան՝ ազգային իրավունքներն աճուրդի կը հանեն, կարծելով թե այս ընթացքով ավելի բարձր աստիճաններու կը հասնին»։ Նրանց համար սովորական բան է «արհեստավորի մը հետ այնպես վարվիլ, ինչպես կը վարվի կռանն երկաթի հետ, դաստիարակի մը հետ խոսիլն ավանակի մը վրա հեծնելով Երուսաղեմ մտնել է իրենց համար։ Խմբագրի մի բարե տալն անոր պատվանշան տալու շափ արժեք ունի իրենց քով»։

Հակառակն է եղել Պալյանը։ Հիմք չունենք չհավատալու հեղինակին, մանավանդ որ արվեստագետ այս գերդաստանը մոտիկից կասված էր հայ մշակույթի հետ և մեծապես օժանդակել է հայ թատրոնի, դրականության, բանասիրության բնագավառի աշխատողներին։

Կարծեք հակադրելու համար Սարգիս Պալյանին, երգիծաբանը նույն օրերին զրել է մի այլ ամիրայի՝ Կարապետ Երամյանի մասին, և զրել է հրեք տող։ Ահա այն. «Կարապետ պեյ Երամյան ծնած է 1830-ին։ Կազմով բարեձև, սև աչերով, սև ընթվիններով մարդ մէ։ Մզկիթ մը շինել տված է»։

Ըստ էության մի նախադասություն է հատկացված Կարապետ Երամյանի հասարակական գործունեությանը, այսինքն թե «մզկիթ մը շինել տված է», բայց այդ մի նախադասությունը ավելի ոչնչացնող է, քան կարող էր լինել ծավալուն մի հոգված։ Երգիծաբանն ուղղում է ասել, թե դա մի մարդ է, որ ամենևին չի հետաքրքրվել հայ իրականությամբ, անհաղորդ է եղել ժողովրդի տառապանքին։

Պարոնյանը ջերմությամբ է զրել Հովհաննես Մյուհենտիզյանի մասին, որը հայտնի է որպես Թուրքիայի տպագրական արդյունաբերության մեջ հեղաշրջիչ դեր կատարող արվեստագետ։ Նա ստեղծել է հայերեն և թուրքերեն տպագրական մի շարք տառատեսակներ։ Նրա գծադրերով տասից ավելի անդամ տպագրվել են թուրքական թղթադրամներ։ «Ջոջերում» մանրամասն թվարկվում են այս մարդու մատուցած ծառայությունները առանց երգիծական օրեք երանգի։

Բայց հակառակ Պալյանի մասին գրվածի, հեղինակը այստեղ զուգահեռաբար բարձրացնում է սոցիալական և քաղաքական մի շարք խնդիրներ։ Մյուհենտիզյանի առիթով նկարագրում է այն ողբալի վիճակը, որի մեջ գրողն ընկել են հայ մշակույթի աշխատողները և հանգում է բնորոշ եզրակացությունների. «Գիտեք հարկավ, — գրում է նա, — որ մեր ազգին մեջ տպարանապետ ըլլալն անանկ ծանր պատիժ մ'է, որ ոչ սողալով քայլելու կը նմանի, ոչ ալ ճակտի քրտինքով ապրելու պատժուն, որուն այսօր ամենքս ալ կը փափաքինք և չենք կարող արժանի ըլլալ... — ինչ որ պատիժ էր Աղամա օրով, վարձատրություն կը համարվի այսօր՝ Պոլսո մեջ։ Աղամա արգիլյալ ծառեն կերավ, ետեր բացվեցավ և վերջին թզենիով գոցվեցավ. պատասխան տվեք ինձ ով պատմագետներ, այս տպարանապետները այդ արգիլյալ ծառն ամբողջ կլլեցին, որ իրենց ետեր միշտ բաց է, բնավ չի դոցվեր... հասպա դասատուները որ բան մը կերած չունին խեղճերը... հասպա խմբագիրնե՞րը, որ միսի վրա դադափար չունին, ինչպես կույրերը՝ գույնին վրա»³¹։

Պալյանի և Մյուհենտիզյանի գիմանկարները, որպես երգիծական երկեր

³¹ Նույն տեղում, էջ 209։

շատ թույլ են, զրեթե սովորական կենսագրություններ, Հեղինակի ուժը ժխտման, բացասման մեջ է և ոչ շոյանքի: Այդպիսի ժխտման ուղով է զրված հաշատուր Միսաքյանի դիմանկարը՝ «Ազգային շոջերի» ամենափայլուն էջերից մեկը: Կարելի է համարձակ ասել, որ այս գրողը Պարոնյանի զրչի տակ ստացել է իր բարոյական մահը:

Միսաքյանը հետաքրքիր անձնավորություն է. կարդացած, ինքնատիպ մի զրող, որին հատուկ է եղել նաև հումորը: Նրանից մեզ հասել են զրաբարախառն մի քանի ոտանավորներ, որոնք ամենեին մեծ զրողի զրչի արտադրանք չեն, և անավարտ մի վիպակ «Սովիա» վերնազրով: Հրապարակախոսական հոգվածներով աշխատակցել է ժամանակի պարբերական մամուլին և զրել բանավեճային բնույթի երկեր: 1861 թ. Փարիզում ծանոթացել է Մ. Նալբանդյանի հետ, վեճի բռնվել, անձնական նամակով բացատրություն տվել: Տսլազրել է մի երկու զրքույկ, որոնցում ավելի նկատելի է խելոք երեւալու մոլուցքը, քան որեւէ հարցի տրամաբանական հիմնավորումը: Չնայած այս շատ համեստ զրական վաստակին, մտավոր կարողությանը, լիբերալ մամուլը նրան զարձրել էր յուրահատուկ կուռք, տեղի անտեղի խնկարկելով նրա առաջ, համարելով հայ նոր զրականության աչքի ընկնող զմքերից մեկը: Արհեստական այս համբավի մեծացմանը նպաստում էր մի քանի ամիրաների ու մեծահայրուստների հովանավորությունը:

Տեսնենք թե ինչպե՞ս է Պարոնյանը նրան ցած իջեցնում Պառնասի զագաթից, իջեցնում ուժղին հարվածներով, անողոք զածանությամբ և տրորում իր ոտքերի տակ: Դրա համար վերցրել է յուրահատուկ մի ձև: Դիմանկարն սկսում է Միսաքյանի կեղծ համբավին արժանի լրջությամբ ու սարկաստիկ խստությամբ:

«Ինչո՞ւ կը քնանաք, ո՞վ պուետներ, որ երկու հանգ գտնելու համար Պառնասը կը շրջապատեք, որպեսզի մուսայի մը թեկն քաշեք և ողորմություն խնդրեք իրմե, նման այն մուրացկաններուն, որ եկեղեցիներու շուրջը կը շարվին: Ինչո՞ւ կը խորդաք, ով զրագետներ, որ ձեր հրաշագործ զրիչն երբ մարդու զպցունեք՝ կենդանիի կը փոխարկեք զայն և երբ անասունի զարնեք՝ մարդու կայլափոխեք: Արթնցեք, ի ծունը իջեք, բացեք ձեր զլուխներն, որպեսզի ամեն մարդ տեսնե անոնց ունայնությունը: Միսաքյանի ճամբուն վրա փռեցեք ձեր հագուստները, խունկ վառեցեք, որպեսզի հաճի աշխարհ զալ ձեր պետն, որ սովորություն ունի շմտենալ երբեք այն մարդերու, որ բուրվառով չեն ներկայանար իրեն: Ինչո՞ւ կամչնաք հիմա զինքը պաշտելու ժամանակով մարդերն երկրպագություն ըրած են այնպիսի աստվածներու, զորս մենք այսօր կը մորթենք, կասկարայի վրա կը խորովենք, կուտենք և վրան պատվական գինի կը խմենք: Օն անդր, պագեք երկիրն, խունկ ծխեցեք յուր քթին, խնդրելով իրմե, որ աթոռ մ'առնե և զա նստի ազգային շոջերու քով, ուր խունկը հազվագյուտ է: Մի վախնաք, ով բարեկամներ, պուետես, շպիտի մորթեմ զինքն, ոչ ալ մի սազի փետուրով³² պիտի հարվածեմ զինքն, այլ պարզապես պիտի պատմեմ յուր վարքը, պիտի գովեմ յուր տաղանգը, եթե ունի: Մտիկ լրեք ուրեմն, բայց մի խնդաք, կը սրողի»:

Չնայած այն հավաստիացմանը, թե շպիտի մորթի Միսաքյանին, ըստ էության մորթում է, հենց հաջորդ հատվածում ժխտում է նրա բանաստեղծ

32 Միսակ անվան հետ կապված բառախաղ է:

լինելու, ասելով թե նա պուլետ «հորջորջված է տղաներեն և յուր պուլետ ըլլալը հաստատելու համար վկա մը փնտրած է և չի հաջողեր գտնել մինչև այսօր»:

Այնուհետև, քննության առնելով Միսաքյանի դրական վաստակը, ասում է թե որևէ երկ, չափսօծ թե արձակ, կամ լինելու է ընտիր, մնալուն արժեք ունեցող, կամ բոլորովին չպետք է գրվի: Սաղրելով այն տգետներին, որոնք իրենց քծնանքի մեջ առաջ դնալով Միսաքյանին տվել են անգամ հանձարեղ տիտղոսը, սովորեցնում է. «Հանձարը ոչ ազգություն ունի, և ոչ կրոն ու իբրև ոսկի յուր արժեքը կը գտնե ամեն տեղ: Հանձարի ծնունդ եղող բանաստեղծություն մը լավ ընդունելություն կը գտնե Անդղիային, որչափ ալ անոր հեղինակը սլավ ըլլա: Իսկ մենք հանձարահանդեսի մը մեջ ի տես աշխարհի ղեկու համար քանի՞ քերթված ունինք»: «Մենք,— ասում է երգիծաբանը,— զժբախտաբար ոսկի կանվանենք, ինչ որ պղինձ է»: Միսաքյանին համարում է դրական պատահականություն, որի երկերը ստեղծված են չարչարանքով, տառապանքով, մտքի արտակարգ լարումով և աչքի են ընկնում իրենց խեղձությամբ, զուրկ են արվեստից: Միսաքյանը այն գրողներից է, որոնք մի հանգ գտնելու համար ոտանավորը հազար անգամ սրբագրում են, ջնջում, նորից գրում, հարյուր թերթ թուղթ պատռում, «եվ երբ հաջողին իրենց փնտրածը գտնել և տողին վերջը տեղավորել» կը տեսնեն որ այդ ոտանավորով ցամաքի վրա նավարկություն կրնեն և ծովու վրա ձիարշավ: Նրանք երբ ցանկանան մեկին գովել, և տողի վերջում ունենան առաջին բառը, իսկույն գտնում են զինի բառը և հանգավորում ոտանավորը: «Բայց մարդը կյանքին մեջ ղինի գրած չէ բերանը, որո՞ւ հոգ. առանց զուպարտելու ոտանավոր գրելը դյուրի՞ն բան է... Այսչափ չէ, սպանության ալ կը դիմեն. բառերը իրենց ձեռներուն մեջ այնքան արժեք ունին, որչափ լաթի մը կտոր դերձակներուն քով. զխեն, մեքեն կամ պոչեն կը կտրեն զանոնք, մեր լեզվին բառերն անկարելի է ճանաչել անոնց ոտանավորներուն մեջ. ասելը՝ սելի կը փոխվի, նվեր-ը երբ ոտանավորի մը մեջ ներկայանալ ուղե, զլուխ կը բանա և վեր կը մտնե հոն»³³:

Երգիծաբանը նրա ստեղծագործությունները համարում է հուզականությունից, բանաստեղծական ավելունից զուրկ, անբովանդակ գործեր, նրանց մեջ տեսնում է մտքի բացարձակ ունայնություն, պճնազարդված գեղեցիկ բառեր: Նա Միսաքյանին համարում է խոսքի վարսավիր, որը «ասդինն անդինն խոսքեր հավաքելով՝ զանոնք կը սանտրե, կը կոկե, անուշաբույր յուղերով կօծե և հրապարակ կը հանե և երկու տողով հասկանալի բան մը՝ յուր գրչին տակ երկու էջի մեջ անհասկանալի կրլա. և երբ վարսավիրա մը կը տեսնեմ, որ անմիտ երիտասարդի մը զլուխը բռնած ժամերով անոր վրա կը խաղա, կըսեմ. «Միսաքյանը հոգված կը գրե», իսկ երբ այն երիտասարդին հետ խոսիմ և զխոսն արտաքին զարդն ու ներքին ունայնամտությունը տեսնեմ, կարելի չէ որ չհիշեմ Միսաքյանի դրած հոգվածները»:

Այսպիսի անողորմությամբ ու դաժանությամբ է քննադատել Պարոնյանը Խ. Միսաքյանին, որը համարձակություն չունեցավ պատասխանելու հարվածին, չնայած ապրեց դրանից հետո ավելի քան տասը տարի: Հետագայում նրա դատը պաշտպանեց Ա. Զուպանյանը: Պարոնյանի մասին պրած հոգվածում, անդրադառնալով «Ազգային ջոջերին», գրում է. «Այսինչ լրագրապետը, որ քանի մը վեպ թարգմանած է, ավելի հարգանքով ծաղրված է,— եթե կարելի

³³ Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 129—130:

է այսպէս ըսելի,— քան Միսաքյանի պէս զրազեւտ մը, զոր Պարոնյան խեղկատակ տիպարի մը մեջ պզտիկցուցած է։ Զոջերուն այդ զլուխը, որ հակառակ շատ փայլուն ըլլալուն՝ անիրավութիւն մըն է, ավելի դատաւարունի կերևա, երբ խորհինք որ Սվաճյանէն ավելի Միսաքյանն է Պարոնյանի բուն նախակարապետը. և... եթէ Պարոնյանի երգիծական պոետերուն առատութիւնն ու տնականալի շունի, շատ իսկատիպ ու ավելի խածնող հեղինակութիւն մը դործածած է, ավելի զրազեւտ է, և շատ ավելի բանաստեղծ ու խորհող միտք»³⁴։

Պարոնյանն էր իրավացի՝ սպաննելով, թէ՛ Զոպանյանը՝ զոհին պաշտպանելով։ Այս հարցի պատասխանը տվել է ժամանակը։ Ուղիղ 70 տարի է անցել Զոպանյանի վերոհիշյալ տողերը գրվելուց։ Հանդարտվել են կրքերը։ Այսօր ո՞րտեղ փնտրենք, պտենենք Միսաքյանին։ Անդամ նրա դասակարգի մարդիկ մեր օրերում դժվարանում են վերականգնել փշրված արձանի գեթ մի մասը, ցույց տալ որպէս արվեստ։ Պարոնյանին գրեթէ ժխտող, բայց նրա մասին 200 մեծագիր էջ գրող Օշականը փորձել է գոնե մի քանի էջով էլ Միսաքյանին տեղ տալ իր «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» բազմահատոր աշխատութեան մեջ։ Նրանից իմանում ենք, որ «առեղծվածային, մթին համբավի մը ծնունդ» հանդիսացող այդ գրողը, որ պոետ է կոչվել ինչ որ ամիրայի կողմից՝ զրաբար խրթին մի ոտանավորի համար, թողել է ավելի քան 2000 էջ ձեռագիր ժառանգութիւն՝ վեպեր, պատմվածքներ, թարգմանութիւններ և այլն, բայց երբ 1909 թ. մարդիկ նայել են ձեռագրերի այդ կույտը, որպէսզի «Հայ գրողներին» հատորի համար նյութ բնորոշեն, չեն կարողացել մի քանի էջ գրտնել, հարկադրված են եղել տարիներ առաջ տպված «Սոփիա» անավարտ վեպի հատվածը վերցնել։ Բսկ ի՞նչ արժեք է ներկայացնում «Սոփիան»։ «Սոփիայի» մեջ,— գրում է Օշականը,— վիպասան մը չկա, այլ տարօրինակ, դժվար տարազելի զրազեւտ մը։ Մարդ կը վարանի այդ զրազեւտին հետ ընելու վերլուծական մեթոդներ, շրջանն մը վկայաբերական հավաստումներ։ Շարունակութեան մեջ Օշականը վկայում է թէ որպէս վեպ «Սոփիան վրիպանք մըն է»։

Բայց ի՞նչ մնաց «Պարոնյանի բուն նախակարապետից»։ Օշականը բերում է շարագուշակ մի վկայութիւն էլ, այս անգամ ինքը՝ Միսաքյանն է, որ իր ստեղծագործութիւնների վրա դամբանական է կարգում, երբ 1891 թ., մահվան անկողնում, հայտնել է, թէ չի հավանում իր գրածներին. «Ելնեմ նև՝ պիտի սրբագրեմ բոլոր գրածներս...»,— ասել է³⁵։

«Աղղային ջոջերի» ամենաբնորոշ առանձնահատկութիւնը զաղափարական նպատակաւացութիւնն է, ակտիվ, կրքոտ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ։ Լիրերալ քննադատութեան այն կարծիքը, թէ Պարոնյանի երկերում չկա «մեծ զաղափար մը, մեծ սկզբունք մը», ոչ այնքան արդյունք է Պարոնյանին չհասկանալու, որքան երգիծաբանի դավանած զաղափարախոսութեան նկատմամբ թշնամական վերաբերմունքի։ Նրա երկերում «տիրական համոզում» չտեսնող մարդկանց մտահոգում է այն, ինչ ամենից արժեքավորն է,

³⁴ «Մաղիկ», 1895, թիվ 5։

³⁵ Հ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Առաջին հատոր, Նրուսաղեմ, 1945, էջ 148։

այսինքն թե էսթետիկական հաճույք պատճառող նյութերը թողած՝ «օրվան մարդերով, օրվան դեպքերով միշտ զբաղած է»³⁶։

Ուշագրավ է, որ Պարոնյանի երգիծանքի ընդգրկումը այսպես բնութագրող Չոպանյանը գրեթե մոռանում է «Ջոջերը», և դա հասկանալի է, այդտեղ է, որ ամենից ավելի հակակարծիք է նրան, ինչպես տեսանք Խ. Մխաթյանի առիթով։

Պարոնյանը գրել է բոլորի մասին, խտրացրել իր դասակարգի մարդկանց, կսմթել արհեստավորներին, իր ծաղրից բաժին հանել մանր արտադրողների, մտավորականության որոշ շերտերի համար, սակայն մեծ է ամենից առաջ իր զաղափարական հակառակորդների՝ «ջոջերի» նկատմամբ կիրառած սատիրայով և դրանով միայն կարող է համեմատվել Շչեգրինի, Սվիֆթի հետ։

Մոլիերը երբեք այնքան սուր նիզակներ չի արձակել ժամանակի ֆրանսիական հետադիմական հոսանքների դեմ, զրչով չի սպանել կենդանի մարդկանց այնքան անողոք կերպով, ինչպես սպանել է Պարոնյանը Տերոյենցին, Մխաթյանին, Գալֆայանին։

Վ. Գ. Բելինսկին գրել է. «Ով իմ կողմը չէ, նա իմ դեմ է»։ ահա նշանաբանը այն մարդկանց, որոնք սիրում են ճշմարտությունն ասել ուղղակի և համարձակ՝ հոգ տանելով միայն ճշմարտության և ոչ թե այն մասին, թե ինչ կասեն իրենց մասին»³⁷։

Այս բնութագրումը վերաբերում է նաև Պարոնյանին։ Երբ նրա գրչի տակ են ընկնում հակառակորդ դասակարգի մարդիկ, ոչ մի նկատառում չի բռնում ձեռքը։ Նրան հատուկ չի ցուցադրման, քննադատության ամոթխած, զգուշ ձևը, ուժեղ հարվածներից հետո, սիրաշահելու ձգտումը, իր բացած վերքի համար սպեղանի ճարելու մտահոգությունը, հիվանդացնելուց հետո դեղահատներ մատակարարելու փութկոտությունը։ Այդպիսի անողոք սատիրայով է քննադատել պետական պաշտոնյա Ստ. Ասլանյանին, բարձր հոգևորականությանն ու հետադիմական գրողներին։ Նրանց նվիրված էջերում զովար է գտնել որևէ շոյանք, մեղմացուցիչ երանգ։ Իշխող դասակարգի ներկայացուցիչների համար սարսափ էր երգիծաբանը, նրանք դառնությամբ էին կարգում նրա սրամտությունները ու ոչ միայն չէին ծիծաղում, այլ վրեժխնդիր ցասումով կրճատցնում էին իրենց առամները։

Նա չէր կարող մի ուսուցչի, դերասանի մասին գրել այնպիսի խստությունամբ, ինչպես գրել է Տերոյենցի մասին։ Լիբերալ խմբագիրներից շատերի նկատմամբ էլ խիստ է, սակայն երևում է, որ հաշվի է առնում ապերախտ ընդգավառը. որին նվիրվել են այդ մարդիկ։ Դա այն ասպարեզն է, որը դստանորեն պատժել էր և իրեն. արդեն պատժվածի, պարտվածի դեմ նիզակներ հոճելը ասպետական գործ չէ։ Բայց այս բոլորով հանդերձ, զաղափարական դիջում չի անում։ Ընթերցողն իսկույն կնկատի, որ քննադատողը և քննադատվողները գտնվում են տարբեր դիրքերում, տարբեր ճամբարներում։ Երբ խոսքը նրանց քաղաքական համոզմունքների մասին է, մերժում է, դրան հակադրում իրը, իսկ երբ խոսքը նրանց գործունեության որոշ կողմերի, մասնակի արարքների մասին է, դառնում է կատակող, ծաղրող։

36 Ա. Չոպանյան, 'Ինքնընկալ', Փարիզ, 1929։

37 Վ. Գ. Բելինսկի, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 15։

Երգիծարանի մեկամաղձոտ էության հեն վերադրելով ոմանք նրա սուբյեկտիվ ընկալման խստությունը, պնդելով, թե ամեն ինչ սև ապակու տակից է տեսել, խտացրել է գույները ու ավելի սև արտացոլել երկերում, թե նա չի տեսել կյանքում որևէ պայծառ բան, առհասարակ մարդը նրան երևում է ստոբացած, արգահատելի։ Դա անտեղի մեղադրանք է։ Նա մարդուն համարում է բնության դերագույն ստեղծագործությունը, ուզում է, որ մնա իր կոշման ու բարձրության վրա։ «Մարդերու թերությունները տեսնելուս համար է, որ շեմ սիրեր զանոնք, և ոչ թե զանոնք չսիրելուս համար անոնց թերությունները միայն կը տեսնեմ»³⁸, — ասել է։ Գրողին հուզում է այն, թե ինչու մարդ արածը ասորուստի թելադրանքով պետք է այդ աստիճան իջնի իր բարձրությունից, մոտենա կենդանական աշխարհին, քծնի, շողոթորթի, խաբի, դավաճանի և՛ սկզբունքին, և՛ իր ժողովրդին։ Ողբում է բարոյական այդ անկումը։ Համամարդկային այն մեծ վիշտը, որ այնքան աուլցված է նրա երկերում՝ դրա արդյունքն է։

Պարոնյանի նպատակն է կյանքի արատավոր կողմերի բացահայտումով ոչ թե զվարճացնել, այլ ժխտել, վերքը բուժել ոչ թե փակելով, այլ վիրահատելով, խարանելով, այրելով, շմտածել, թե որքան ցավ կը պատճառի դա հասարակության հիվանդ անդամին. եթե պետք է հատել, ավելորդ է վարանումը. միայն թե առողջանա մարմինը, որի մեջ սուսանց այն էլ շատ են վտանգավոր մանրէները։

Երգիծարանը հեռու է գոհակաբանությունից, պայքարի էժան միջոցներից, մանավանդ ցինիզմից, որ առհասարակ հատուկ չէ նրա դրչին։ Հակառակորդի ծիծաղելի հատկությունները չի համարում արդյունք նրա բնավորության, անձնական հակումների, դրանք քննության է առնում գերազանցապես հասարակական հարաբերությունների հետ կապված, բայց քաղաքական միտումը մղում է նրան այլանդակը, մերժելին որոնել ու գտնել մեծ մասամբ «ազգային ջոշերի» շրջանում, հարուստ դասի մեջ։ Այս դեպքում ձանձրանալի դառնալու աստիճան հետևողական է, հայածող, հետապնդող։ Այդպիսի հետևողականություն է հանդես բերել հորեն Գալֆայանի, Ա. Հասունյանի, Տիգրան Յուսուֆյանի և այլոց նկատմամբ։

Ժխտման մեջ խստորեն կիրառում է դադափարական մոտեցումը։ Մտավորականների թերությունները քննադատելիս ժխտում է երևույթները, կենցաղային որոշ սովորություններ, բարոյախոսական ըմբռնումներ, որոնք խորք են այդ խավին, բայց չի ժխտում, ոչնչացնում դրանց կրող մարդկանց, երբեմն նույնիսկ համակրում է, մինչդեռ բարձր հոգևորականության ու լիբերալիզմի քննադատության ժամանակ ժխտում է մարդուն, բարոյապես սպանում։ Նա չի ասում՝ եթե Խ. Գալֆայանը վերացնի այս կամ այն թերությունը, ապա լավ կլինի, այլ ասում է ալդ հոգևորականը իր գործունեությամբ վնասակար է հասարակության համար, հեռու պետք է մնալ նրանից։

Պարոնյանն իր ամբողջ ստեղծագործության մեջ չի ծաղրել սեփական աշխատանքով ասորող մարդկանց, նրանց նկատմամբ ունեցել է բացառիկ հարգանք ու համարում, նրանց մոտ է տեսել մարդկային իրական արժանիքներ՝ վեհանձնություն, արժանապատվություն, կարեկցանք ու անձնագոհություն։ Անդամ մի Պալյան ամիրա՝ եթե ունի այդ հատկանիշները, արժանանում է հիացմունքի։

³⁸ Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 483։

Շշեղորինի, Գոգոլի որոշ երկերում սատիրան հեշտ ընկալելի չէ, այնքան թանձր կեղևի տակ է, որ առաջին ակնարկից դժվար է թափանցել խորքը: Դժվար է հաճախ մի ընթերցումով հաղորդակից դառնալ այն մտքերին, որ հուզում են Շշեղորինին, ասենք՝ «Հեթաթեներում»:

Այդպիսին է Պարոնյանը «Ազգային ջոջերում», որը թարգմանելիս գրական արժեքից շատ բան կարող է զեղչվել: Բայց արդյո՞ք թարգմանության հարցը միակ շափանիշն է: Գոգոլի «Մեռած հոգիները» կտա՞ն զլիաքի ընթերցողին այն, ինչ տալիս է ռուսին կամ Ռուսաստանում ապրողին: «Կրկնում ենք» — գրում է Բելինսկին, — որքան ավելի բարձր է Գոգոլի արժանիքը որպես պոետի, այնքան ավելի կարևոր է նրա նշանակությունը ռուս հասարակության համար և այնքան ավելի քիչ նա կարող է որևէ նշանակություն ունենալ Ռուսաստանից դուրս»³⁹:

Ա. Զուպանյանը Պարոնյանի երգիծանքը համարում է չոր, սոսկ տատմողական, զուրկ հուզականությունից, քնարական քնքշությունից, բնության զգացողությունից, մի խոսքով երգիծաբանի հոգուն խորթ է համարում էսթետիկական ընկալումը: «Մեծ հատկություն մը զոր Պարոնյան չէ առած՝ իր վարպետներեն և որ էական է սակայն որևէ մեծ գրագետի համար, անոնց բանաստեղծի հոգին է, և անոնց արվեստագետի զգացումը... Մոլիեր, որ շատ նվազ բանաստեղծ է, քան հույները, «Անֆրիդիոնին» մեջ թեթև ու զոդտրիկ քնարերգություն մը հնչեցուցած է, ուր հեղինակությունը օդային փափկություն մը կառնե, և «Միզանթրոպին» մեջ կարելի չէ չզգալ տրամությունն իր դժբախտ հոգին»⁴⁰:

Հորջ է մեղադրանքը, բայց սխալ: Այսպես կաբող էին դատել այն մարդիկ, որոնք Պարոնյանին չեն ճանաչում խորքում, տեսնում են նրա ծիծաղի կեղևը, առանց նշմարելու նրա տակ թաքնված վիշտը: Ա. Արփիարյանը Պարոնյանի երգիծանքը, իրավացիորեն, համեմատում է խինինի այն հատիկներին, որոնք փաթաթված են փայլուն թղթով, դառն դեղահատը այդ կեղևի տակ թաքցնում է իր էությունը:

Պարոնյանի ստեղծագործության մեջ լսվում է տառապող ժողովրդի հևքը, զգացվում նրա վիշտը, հաճախ հեծեծանքը, նաև ընդվզում: Այս բոլորը անցնում են երգիծաբանի զգայուն հոգու ցանցով, ցողվում նրա սեփական արտասուքով: Էություն մը ծուլվում է մատուցվող կյանքին և չի կարող անտարբեր լինել նրա նկատմամբ: Նա իր մտքի խոշորացույցով չէ, որ մեծացնում է թերությունները, այլամերժ, մարդատյաց հոգու արգասիք չէ նրա ժխտման թանձրը ներկր: Իրական կյանքն է այդքան առատ նյութ մատակարարում նրա գրչին:

Այդ թերությունները հուզում են նրան այնպես, ինչպես հուզել են «Մեռած հոգիների» հեղինակին՝ ի տես ճորտատիրական Ռուսաստանի ծանր վիճակի: Մի՞թե անտարբեր է մեր հեղինակը «ջոջերից» շատերին հասցված բարոյական վնասի նկատմամբ, ընթերցողի ականջին նա չի՞ հուշում՝ ինչո՞ւ այսքան նվաստացուցիչ վիճակ մարդ էակի համար, այն էլ մտավորական մարդու: Պատմողականի կաղապարի տակ, նույնիսկ բացասման ձևի մեջ խորապես հուզիչ են «Ջոջերի» շատ էջերը:

³⁹ Վ. Գ. Բելինսկի, Ընտիր երկեր, էջ 27:

⁴⁰ Ա. Զուպանյան, Գեմքեր, նույն տեղում:

Գրականագիտության մեջ կա կարծիք, թե հումորին հատուկ է թախծն ու վիշտը: Հեղինակի կարեկցանքը ծաղրվող մարդու նկատմամբ առաջացնում է ափսոսանք, խղճահարություն: Իհարկե սա ճիշտ է, բայց չի փակում դռները, սպառում սահմանները: Ժխտող երգիծանքն էլ խորքում կարող է ողբերգական լինել, և այդ ոչ թե քննադատվող անհատի նկատմամբ եղած կարեկցանքից, որովհետև նա այդ անհատին ոչնչացնում է, — այլ նրա գոհերի կրած ցավից: Մի Անտոն Հասունյանի հնարավոր է ծաղրել առանց տառապելու այն գիտակցությունից, որ պատճառում էր հայ ժողովրդին՝ Վատիկանին ծախված այդ անձնավորությունը, միամիտ մարդկանց սրսկելով կրոնի թույնի ամենավտանգավոր տեսակը՝ ազգամերժումն ու ազգազավությունը:

Զույանյանից ավելի քան տաս տարի առաջ Պարոնյանի երկերի խորքը ավելի է թափանցել Ե. Տեմիրճիպաշյանը, գտնելով թե «Ծիծաղի ձևով կարտասվելը Պարոնյան մարդկային մոլությունաց և մոլորության վրա»:

Բայց այդ արտասուքը, լացը, ինչպես ճիշտ կերպով նկատել է պրոֆ. Ա. Տերտերյանը, թուլություն, խեղճություն, հուսահատություն լաց չէ, այլ «զայրույթի լաց», սրանով է Պարոնյանը տարբերվում շատ երգիծաբաններից, այդ թվում Մուխրեբից: «Լենգլիացի գրող Դիկկենսի սատիրան, — գրում է Տերտերյանը, — բավական աչքի ընկնող մի երևույթ է համաշխարհային գրականության մեջ. բայց այդ սատիրայի մեջ բացակայում են այն մագիլները, այն դայրույթը», որ առկա է Պարոնյանի մոտ: «Դիկկենսը, — շարունակում է Տերտերյանը, — անսլացման նկատմամ է կյանքի բացերը, թերությունները, ազադակող հակասությունները, բայց այդ բոլորի հետ միասին մեղմ ժպտը, հաշտարար միմիկան չի վերանում նրա երեսից... Պարոնյանի ոչ մի երկը իրականության հետ հաշտության ձևով չի առաջագրում, նրա զայրույթը մնում է հետևողական թե՛ իր սկզբի, թե՛ իր ընթացքի, և թե՛ վախճանի մեջ»⁴¹:

Ծիշտ է համեմատությունը: Պարոնյանը իր աշխարհայացքով, կոնֆլիկտի մեջ լինելով տիրապետող դասակարգի հետ, ներողամիտ և զիջող գիրք չի գրավում. նրա համար երգիծանքը ամենից առաջ դասակարգային ղենք է իր հաղթանակին վստահ մարտիկի ձեռքին, ուստի նրա արտասուքն էլ առաջացած ժողովրդի ծանր վիճակից, վերածվում է յուրահատուկ ցասումի, մանավանդ երբ նա իր մագիլները սրում է շահագործող դասակարգի դեմ:

Հ. Պարոնյանի «Ազգային ջոջերի» զաղափարական այս սրությունը, որոշակիությունը չէ միայն, որ ապահովել են նրա մնայուն տեղը հայ դասական գրականության մեջ: Առաջավոր այդ տենդենցը սերտորեն զուգորդվում է գեղարվեստական բացառիկ արժանիքների հետ:

«Զոջերում» հեղինակը տվել է ռեալիզմի ամենափայլուն օրինակը: Ռեալիզմը այդ ստեղծագործության հիմնական հատկանիշն է, տարերքը, էությունը: Հեղինակի գրչին անհարազատ է կեղծ, անբնական, մտացածին որևէ նկարագրություն, որևէ ավելորդ շաղակրատում, գրական սեթեկեթանք, պճնանք: Զգույշ է բառերի, էպիտետների, համեմատությունների ընտրության մեջ: Մնալով սրամտության ու սրախոսության խոշոր վարպետ, առատության եղջյուրից շաղ տալով մեկը մյուսից սրամիտ ասույթներ, ժլատ է խոսքի, բառի ընտրության հարցում: Դժվար է գտնել ավելորդաբանություններ, անտեղի գործածված բառեր:

41 Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ, Երևան, 1945, էջ 263:

«Աղղալին ջոջերում» պատկերները, երգիծական համեմատությունները ինքնանպատակ, հենց այնպես գրչի տակ եկած սրախոսություններ չեն. ելակետը տվյալ ջոջի հասարակական, քաղաքական դերի գնահատականն է: Բոլոր կենսագրություններն սկսվում են տվյալ զործչի ծննդի հետ կապված սրամիտ մի բնութագրով: Առաջին այդ նախադասություններով էլ հեղինակը մատնում է իր հակակրոնությունն ու համակրությունը, անգամ հակակրոնյան շափր: Դրանք յուրահատուկ թեզեր են, որ հիմնավորվում են հետագա շարադրանքի ընթացքում՝ արդեն իրական փաստերով, երգիծական բազմազան միջոցներով: Հատկանշական են այն բնութագրումները, որ գտնում ենք ժողովրդի գլխին պատուհաս դարձած մարդկանց կենսագրությունների սկզբում: Դրանք ոչ այնքան ծիծաղ առաջացնելու միտում ունեն, որքան սկզբից եկթ ստեղծելու լուրջ, ծանր մթնոլորտ, որի մեջ զծաղրվելու է ջոջը: Զգաստանում է երգիծաբանի գրիչը, կարծես մի սև թուխպ իջնում է նրա հոգուն, ուրվագծում մռայլ, սև մի պատկեր: Մնալով ժողովրդական մտածողությանը հարազատ՝ դուշակում է զժախտություն, աղետ, բնությունը, տարերքը մասնակից դարձնում նման մի պատուհասի լույս աշխարհ դալուն: Այսպես, Խորեն Գալֆայանի «Ծնած դիշերը երեք տեղ հրդեհ պատահեցավ», Տերոյենցի ծննդյան հետևյալ գիշերը ծնան դեբեր, որոնց զոյությունն այն թվականին ի վեր հաստատված ճշմարտություն մէ», Անտոն Հասունյանի «Ծննդյան դիշերն ամեն մարդ սկսավ իրաբու հարցնել, թե ինչու դիսավոր աստղ շերեցավ, վասնզի նախնիք դիսավորները շարագուշակ նշան համարելով՝ կը հավատային, թե նախ դիսավորը կուգա և ապա փորձանքը»:

Այսպիսի շարագուշակ ձևով են սկսվում այն բոլոր ջոջերի կենսագրությունները, որոնց հասարակական, դրական գործունեությունը մերժվում, ժխտվում է հեղինակի կողմից: Այդպիսի ցասկոտ պատկերներով չեն սկսվում հայ մշակույթի երախտավորների դիմանկարները, որքան էլ դրանք գրված լինեն քննադատական ոգով: Նրանց համար օգտագործվում են այլ պատկերներ, համեմատություններ, միշտ հավատարիմ ասույարեզ քաշվող մարդկանց ընդհանուր նկարագրին: Այսպես, ծաղրելու համար Կ. Ութուճյանի խորամանկությունը, ասվում է, թե նա ծնվելուց հետո սնվել է աղվեսի կաթով: Կ. Փանոսյանի վերանորոգչական հավակնությունները ծաղրելու համար ասվում է, թե նա ծնվելուց անմիջապես հետո աղաղակել է. «Ինչ թանձր տղիտության մեջ եմ մնացեր»: Ք. Ղազարոսյանի անսկզբունքայնությունը, անհետևողականությունն է ծաղրվում, երբ ասվում է թե նրա «ծննդյան թվականը հայտնի չէ իր սկզբունքներուն պես»:

Նման ընդհանուր բնութագրումներով ներկայացնելով իր ջոջին, Պարոնյանը անցնում է կենսագրության մանրամասներին, յուրաքանչյուր վավերական եղելության մատուցման համար գտնելով նորանոր երգիծական արտահայտչական միջոցներ: Դրանցից է տարբեր երևույթների գուգահեռ ձաղկումը: Իր հերոսների այս կամ այն հատկանիշը, արարքը քննադատելիս հեղինակը միաժամանակ ծաղրում է հասարակական-քաղաքական, մշակութային կյանքին վերաբերող երևույթներ, մի պահ ընթերցողի միտքը մղելով դեպի նոր բնագավառը: Քաղաքական խստությունների պայմաններում գրված «Ջոջերում» էլ գուգահեռ համեմատություններով, միջանկյալ նախադասություններով, փակագծային ռեպլիկներով երգիծաբանը քննադատում է Թուրքիայի ներքին զրույթները, արտաքին քաղաքականությունը, Անդրիայի դիվանագիտական

խարդախությունները, պատրիարքարանի անզորությունը հայ ժողովրդի տրեստեսական և քաղաքական իրավունքները պաշտպանելու գործում և այլն: Ակնարկելով հորմյան պատգամավորության բեռինից վերադառնալու առիթով լիբերալ մամուլի բարձրացրած աղմուկը՝ թե այնուամենայնիվ հայերը որոշ բան շահեցին, նվիրույան ավելի լավ ճանաչեց հայերին, Պարոնյանը գրում է. «Եթե այս օգուտներուն երեւակայականը մեկդի նետելով՝ իրականին դառնանք, սա օգուտը կը գտնենք, որ առաջ դավաճաններու մեջ եթե տարին հարյուր հոգի կսպանվեին, այսօր հազար կսպանվին, և այս ալ մեծ օգուտ է անշուշտ անոնց համար, որք բազմութենէ շին ախորժիր: Խոսելով շատ անմեղ մի հարցի՝ Մյուհենտիսյանի պատրաստած տառերի ղեղեկություն, համաշափության մասին, հանկարծ մի ոստյունով ասում է. «Բնչպես կը տեսնվի, այլին ամեն կողմը հավասարություն կար, մինչդեռ Թուրքիո և ոչ մեկ կողմը կա այս հավասարությունը»: Կամ՝ ծաղրելով բժիշկ Շիշմանյանի տված զեղերի անզորությունը, ասում է. «Վեց ժամ կը սահի, ղեղն անզոր է — կարծես պատրիարքարանէ Բ. դուռն ղրկված քաբլի մ'է, բնավ ազդեցություն չըներ»: Հայերի Ազգային սահմանադրության մասին խոսելիս՝ ընդհանրացնում է և ասում. «Ամեն ազգերու մեջ այսպես եղած է, երբ միապետությունն սահմանեն անդին անցած է՝ ծնած է հասարակապետությունը». և այս գրվում էր Համիդի միապետական տիրակալության երրորդ տարում, երբ սկսվել էին բռնապետական խստությունները: Հովհ. Տերոյենցի առիթով կարդում ենք. «1846-ին լրագրական ասպարեզին գուռը բաց գտնելով ներս մտավ: Թուղթ մը գտավ, առավ և վրան «Հայաստան» գրեց — Քյուրտստան րսե, Քյուրտստան, կը պոռա Սրբ Լևրոր — և սկսավ հրատարակել»: Միջանկյալ այս նախադասությամբ ծաղրվում է Անդրիայի ետպատերազմյան հակահայ քաղաքականությունը, երբ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյրդը առաջարկում էր քարտեզների վրայից վերացնել Հայաստան բառը, նրա տեղը գրել Քյուրտստան՝ ի հաճույս սուլթանի: Մի այլ առիթով՝ պարզապես զինված ապստամբության անհրաժեշտությունն է պաշտպանում, երեւի նկատի ունենալով, որ բուլղարները այդ միջոցով ստացան իրենց քաղաքական ազատությունը: Ընտրած ձևը, արտաքին կաղապարով դարձյալ անմեղ կատակի բնույթ ունի. խոսում է Ութուճյանի լեզվական նորամուծությունների մասին, գրում է. «Բավական բառեր հարստահարած է, շատ բառեր սպաննած է, բայց այս դարուս մեջ ո՞ր բարեկարգությունը առանց արյան կարևորի եղած է»:

Մեր բերած օրինակները բնորոշ են Պարոնյանի քաղաքական երգիծանքի համար: Զուգահեռ համեմատությունների, հիշատակությունների երգիծաձևը օգտագործված ենք տեսնում նաև ջոշերի անհատականության ամբողջացման, տիպականացման ընթացքում: Զարմանալի հետևողականությամբ Պարոնյանը տիպականացրել է իր կենսագրած բոլոր մարդկանց, տիպականացրել թե՛ նրանց հոգեբանությամբ, բնավորության նկարագրով և թե՛ արտաքին կենցաղային հատկանիշներով: Այսպես, մենք իմանում ենք, որ Խորեն Գալֆայանը միջին հասակով, բարեձև կազմով, ղեղեցիկ արտաքինով մարդ է եղել, թե Ստ. փաշա Ասլանյանն ունեցել է «վարդի պես կարմիր, այտեր և ածուխի պես սև հոնքեր ու մազեր», Կ. Ութուճյանը «ծրկար հասակով, թուխ ղեմքով, սև ընթվիներով և աչերով քաջառողջ մարդ մե», Շիշմանյանը (Ծերենցը) Ֆեսի փոխարեն զլխարկ է օգտագործել, Էղել է զվարճախոս, կատակասեր, ունեցել է թավ

ձայն, «մազերն ուսերուն վրա կը ծածանին և բարերարի մը կսպասեն, որ սանտրվին» և այլն:

Նույնիսկ այս արտաքին նկարագրությունների մեջ շատ հաճախ գտնում ենք համեմատություններ, զուգահեռ թվարկումներ, որոնք նպաստում են ջոհին ճանաչելու իր բնավորության գծերով, հոգեբանական նրբերանգներով համոզմունքներով: Տերոյենցի մասին խոսելիս՝ գրում է, թե նա 1832 թ. եկել է Պոլիս՝ «ձեռքին ունենալով պայտուսակ մը, որ կը սլարունակեր շորս շապիկ, վեց վարտիկ, քանի մը հայերեն գրքեր, քիչ մը զրուարտություն, ծրար մը կոիվ, շորս թաշկինակ, կտոր մը սպանիր, և կտոր մալ վեհանձնություն»: Կամ Ստ. Փափազյանը «Սովորություն ուներ խոսած ժամանակ երբեմն քանի մը քայլ առնել դեպի ձախ և երբեմն դեպի աջ — վերջերս կարծիքներն ալ ոտներուն օրինակին հետեւեցան...»: Գրիգոր Արծրունին «ծայրագունության աստիճան առավ պատմության մեջ և եպիսկոպոսության աստիճանին բարձրացավ համառության մեջ» Բ. Ղազարոսյանի «մորուքը մտքին պես է, կարճ է»:

Երգիծական այս կենսագրությունների վերջավորություններից յուրաքանչյուրը մեկ-մեկ սրամիտ գյուտ է, որ ամբողջացնում է տվյալ ջոջի նկարագիրը: Այստեղ էլ առաջին ակնարկից թվում է, թե նկատի են առնված, հիմնականում, արտաքին հատկանիշներ, երբեմն էլ հանդիպում ենք կրկնության թվացող համեմատությունների: Բայց այդպես չէ. Պարոնյանի ներկայակեր երբեք զույների այնպիսի առատություն չի ցուցադրում, որքան այս վերջավորություններում, միաժամանակ նրա վրձնի հայումները երբեք այնքան բազմազան հոգեվիճակներ չեն փոխանցում թղթին, որքան այստեղ: Մոայլ, խրստաբարո, վիճասեր, առաջադիմական զաղափարներից սարսափող Տերոյենցըն ունի այնպիսի դեմք, «զոր մենք կունենանք, երբ տասնչորս տրամ անգլիական աղ ջուրի մեջ հալեցունելով խմենք»: Անտոն Հասունյանի դիմանկարի վերջում կարդում ենք Հոս կը վերջանա ահա կենսագրությունն այն մարդուն, որուն դեմքն օր մը սղտիկ տղա մը տեսնելով վախցած է. և մինչև այսօր կուլա»: Կ. Ութուճյանը փողոցում երբ գլուխը վեր առնե՝ այն դեմքը կունենա, «երբ Շիրքեթի շողենավերին մեկուն մեջ նստած ժամանակ քովեղ հարյուր քսան օխանոց մեկը անցնելով ուժով ոտիդ կոշտին վրա կոխե և անցնի երթա՝ առանց ներողություն խնդրելու»: Կ. Փանոսյանի դեմքը նմանեցնում է այն մարդու դեմքին, որը թերթում կարդում է, թե վիճակախաղի իր տոմսը շահել է հարյուր հազար ֆրանկ, ու երբ գումարը ստանալու համար բաժնետոմսը ներկայացնում է ընկերության պաշտոնյային, ստանում է այսպիսի պատասխան. «Պարոն, շահող թիվը այդ չէ, լրագիրները սխալ հրատարակած են»: Ահա և մեզ ավելի ծանոթ Խ. Միսաքյանի դիմազծային բնութագիրը, որ ամբողջացնում է բացասման ոգով զրված կենսագրությունը. «Եթե կը փափաքիք Միսաքյանի դեմքին վրա ծանոթություն առնել, հիշեցեք դեմքերն այն մարդերուն, որոնք օր մը լսելով որ Դիողինես հրապարակի վրա մարդե՛ր, մարդե՛ր կը պոռար, անոր շուրջը խմբվեցան և հետևյալ պատասխանն առին. «Ես մարդ կանչեցի, դուք ինչո՞ւ եկաք»:

Պարոնյանի ողջ ստեղծագործությունների մեջ «Ազգային ջոջերը» յուրահատուկ տեղ է բռնում լեզվական կողմով: Մինչդեռ մնացած երկերում այնքան առատորեն հորդում է պոլսահայ խոսվածքը զրական աննշան զգեստավորումով, այստեղ այդ խոսվածքը զրեթե բացակայում է: Բոլոր դիմանկարները զրված են արևմտահայ զրական լեզվով. անգամ մի քանի երկախոսություն—

ները, որոնք տվյալ ժանրի համար խոտորումներ են, դրական լեզվով են: Չօգտագործելով սոցիալազայ խոսվածքը, երգիծաբանը հարադատ է ժողովրդական մտածողության, չի սիրում վերամբարձ ոճը, գրական սեթեթեանքը, իրական ու կոնկրետ է պատկերների մեջ, սիրում է գործածել թեմատիկ խոսքեր, աֆորիզմներ, ժողովրդական ասացվածքներ:

Այսպիսով, Հ. Պարոնյանի «Ազգային ջոշերը» թե՛ իր առաջավոր գաղափարախոսությամբ, քաղաքական նպատակասլացությամբ և թե՛ գեղարվեստական արժանիքներով հեղինակի գլուխ-գործոց ստեղծագործություններից է, միաժամանակ հայ երգիծական գրականության անհաս գագաթը: Այն արտացոլում է հայ ժողովրդի արևմտահայ հատվածի համար ճակատագրական մի պատմաշրջանի՝ ևսոպատերազմյան շրջանի հասարակական-քաղաքական մտայնությունը, երբ սահմանադրական տարիների թեմատիկա ազգային զարթոնքը տեղի էր տվել քաղաքական կաշկանդումների, հուսալքման և հայ ժողովրդի ճակատագիրը իրենց ձեռքը վերցրած կրոնական ու աշխարհական ջոշերի պործունեությունը նոր պայմաններում դեմքնաբեկ էր դնում ազգի շահերին, միաժամանակ ստացել էր զավեշտական երանգ:

Պարոնյանի ծաղրը մինչ այդ գրված ոչ մի այլ երկում այնքան թունոտ, ժխտող չէ, որքան այս գործում, որտեղ արտաքին զավեշտական նկարագրությունների տակ հստակ կերպով երևում է հայ ժողովրդի խորապես ողբերգական վիճակը: Բայց նա միայն ժխտող չէ, այլև հաստատող: Ժխտելով, մերժելով բռնի ժողովրդի վզին փաթաթված ազգային խնամակալությունը, ջոշերի ու ջոշիկների ծառայությունը, հաստատում է այն միտքը, որ ազգի ապագան պետք է դնել ավելի հուսատու ձեռքերի մեջ, մարդկանց, որոնք ոչ թե առաջնորդեն նրան դեպի անձնատվություն, այլ կարողանան կողմնորոշվել բարդ իրադրության պայմաններում, սպասել նպաստավոր պայմանների:

Г. Х. Степанян

«НАЦИОНАЛЬНЫЕ СТОЛПЫ» АКОПА ПАРОНИЯНА

Р е з ю м е

В творчестве великого армянского сатирика Акопа Пароняна особое место занимает произведение «Национальные столпы». Проникнутое передовыми идеями, политически весьма целеустремленное это произведение по праву считается непревзойденной вершиной армянской сатирической литературы. В нем нашли свое выражение общественно-политические устремления западных армян после русско-турецкой войны 1877—1878 гг., когда национальное пробуждение западных армян, возникшее в годы обещанной конституции, уступило свое место политическому унынию и отступничеству. Деятельность общественно-политических столпов нации, в руках которых находилась судьба народа, шла вразрез с интересами западных армян.

Автор статьи подчеркивает, что сатира Пароняна ни в одном из его предыдущих произведений не звучит так остро и уничтожающе, как в «Национальных столпах», где под кажущимся на первый взгляд забавным описанием личности армянских деятелей ярко вырисовывается глубоко трагическое положение целого народа. Однако в указанном произведении Паронян не только отрицает. Отвергая покровительствующие услуги столпов, насильно навязываемые народу, Паронян утверждает ту мысль, что будущее нации должно находиться в более надежных руках людей, способных вести народ не к гибели, а к лучшему будущему.